# Ազգ

Azg

28 ՍԵՊՏԵՄԲԵՐ 2012 ՈՒՐԲԱԹ 169(5021)

ISSN: 1829-1651


## Վարդան Օսկանյանին անձեռնմխելիությունից զրկում են

Գլխավոր դատախազ Աղվան Հովսեփյանը երեկ Ազգային ժողով է ներկայացրել միջնորդագիր՝ ԱԱԾ քննչական ծառայության վարչության վարույթում քննվող քրեական գործով ԲՀԿ պատգամավոր Վարդան Օսկանյանին որպես մեղադրյալի ներգրավելու համար Ազգային ժողովից համաձայնություն ստանալու: Այս լուրը երեկ հաստատեց գլխավոր դատախազության մամուլի խոսնակ **Սոնա Տրուզյանը**: Դեռեւս կալանքի հարց չի դիտարկվում, այլ խոսք է գնում պատգամավորական անձեռնմխելիությունից զրկելու մասին: Հասարակությունը հիշում է երեք դեպք անձեռնմխելիությունից զրկելու՝ Մուշեղ Մովսիսյանի, Վանո Սիրադեղյանի եւ Սասուն Միքայելյանի եւ մյուսների: Երեք դեպքում էլ Ազգային ժողովը խելոքխելոք հանձնել է պատգամավորներին: Այնպես որ, կարծում եմ, այս անգամ եւս այդ միջնորդությունը կբավարարվի առանց բարդությունների, միայն հետաքրքրական կլինի դիտել, թե ինչպես կպահի իրեն ԲՀԿ-ն: Փաստորեն մեր երկրում կարելի է 10 տարի արտգործնախարար լինել եւ հետո ներգրավվել որպես մեղադրյալ, պահ քաղաքականությամբ զբաղվելու տարբեր երեսները՝ նայած որ պահին ո՞ւմ ես օգնում կամ խանգարում: Ս. Խ.

## Նոր սցենարներ՝ նախագահական ընտրություններին ընդառաջ



ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Մինչ քաղաքական դաշտում մտածում էին, թե նախագահական ընտրությունների հետ կապված գործընթացները դանդաղում են, նախագահ Սարգսյանն աննկատ սկսեց քարոզարշավը՝ իր գործունեության մեջ արդեն հստակ ուղերձներ դնելով առ նոր նախագահական ընտրություններ: Մեկ շաբաթ առաջ, երբ բյուջեի միջոցների արդյունավետ ծախսը պահանջելով՝ նա ձայնը բարձրացրեց կառավարությունում, մի պահ բոլորին թվաց, թե սա հատկապես կառավարությանն ու վարչապետին է վերաբերում, իսկ նրա տված անուններից յուրաքանչյուրի վերաբերյալ բազմաթիվ ենթադրություններ արվեցին: Սակայն նախագահը շարունակեց, եւ մեկ օր առաջ պաշտպանության նախարարությունում նորից խիստ երանգներ էին նախագահի ձայնում՝ «Ի՞նչ է նշանակում պարտք վերցնել մատակարարից» զայրացած հարցադրումով եւ պաշտպանության նախարարությունը գնումների առումով գոնե օրինակելի դարձնելու պահանջով: Տես էջ 3

## Ահմադինեժադը ՄԱԿ-ում դատապարտեց սիոնիզմը

ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի վրա իրենց կնիքն են թողել Սիրիայի գլխավորությամբ Մերձավոր եւ Միջին Արեւելքի երկրներում ընթացող քաղաքական զարգացումները, «Մահմեդականների անմեղությունը» ֆիլմի շուրջը իսլամական աշխարհում բարձրացրած աղմուկ-աղաղակն ու ԱՄՆ-ի առաջիկա նախագահական ընտրությունները:

Այս ամենը թերեւս խոչընդոտել է ասամբլեայի աշխատանքներին երկրների ամենաբարձր մակարդակով մասնակցությանը: Համենայն դեպս, Իրանի Իսլամական Հանրապետությունը մասնակցում է նախագահի մակարդակով: Խոսքը Մահմուդ Ահմադինեժադի մասին է: Սեպտեմբերի 26-ին ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեային դիմելիս, նա Իրանին ծնկի բերելու նկրտումների համար դատապարտել է գերհզոր տերություններին, ապա ասել, որ իր երկիրը սիոնիստների ռազմական սպառնալիքի տակ է: Այնուհետեւ նոր աշխարհակարգ կերտելու կոչ է արել ներկաներին:

Նախագահ Ահմադինեժադի ելույթի պահին ամերիկյան պատվիրակությունը լքել է դահլիճը, իսկ հազարավոր մարդիկ ՄԱԿ-ի շենքի մոտակայքում ցույցերով դատապարտել են Իրանում գործող վարչակարգը:

Հ. Չ.

## Ստեֆան Ֆյուլե. «Գնահատեցինք՝ լրացուցիչ 15 մլն եվրո հատկացնելով Հայաստանին

Երեկ Հայաստանում էր Եվրոմիության ընդլայնման եւ եվրոպական քաղաքականության հարցերով հանձնակատար Շտեֆան Ֆյուլեի գլխավորած պատվիրակությունը: Նա մի շարք հանդիպումներ է ունեցել Հայաստանի ղեկավարների հետ, վարչապետի հետ հանդիպումից հետո լրագրողների հարցերին պատասխանել Տիգրան Սարգսյանի հետ համատեղ, ապա հանդիպել Ազգային անվտանգության խորհրդի քարտուղար Արթուր Բաղդասարյանին, այցելել Ազգային ժողով. «Մենք լուրջ հիմքի վրա ենք կանգնում եւ առաջ շարժվում լուրջ հենակետից, արդեն շատ դրական փոփոխություններ Հայաստանում եղել են: Մենք դա գնահատեցինք՝ լրացուցիչ 15 մլն եվրո հատկացնելով Հայաստանին՝ «ավելին ավելիի դիմաց» սկզբունքի շրջանակում, Եվրոպական հարեւանության քաղաքականության համատեքստում:

Ընդամենը մի քանի րոպե առաջ վարչապետի հետ ստորագրեցինք երկու համաձայնագրեր, որոնցով նախատեսվում է 43 մլն եվրոյի օժանդակություն, որը կնպաստի, որպեսզի Հայաստանի հաստատությունները նախապատրաստվեն Եվրոպական միության հետ քաղաքական ասոցացմանը եւ տնտեսական ինտեգրմանը: Մենք նաեւ քննարկեցինք, թե ինչպես կարելի է Հայաստանի միջազգային գործընկերների ջանքերը միավորել, որպեսզի արտաքին աջակցությունը նպաստականողղվի ազգային ամենաhրատապ բարեփոխումների իրականացմանը: Ամեն անգամ, երբ նայում եմ, տեսնում եմ, որ առաջընթաց ենք արձանագրում թե՛ վիզաների դյուրացման եւ ռեադմիսիայի համաձայնագրերի բանակցության առումով, թե՛ այլ ոլորտներում, մասնավորապես, Ասոցացման համաձայնագրի բանակցություններում եւ դրա մաս կազմող խորը եւ համապարփակ ազատ առեւտրի համաձայնագրի բանակցություններում:

Այս համաձայնագիրը մի քանի կարեւորություն ունի մեր հարաբերությունները ավելի բարձր մակարդակի բարձրացնելու համար: Այն բնավ չի սահմանափակվում ազատ առեւտրի սովորական պայմանագրի նման պայմանագիր լինելով: Այդ համաձայնագրով Եվրոպական միությունը Հայաստանի առջեւ կբացի իր ներքին շուկային վերաբերող իրավական կարգավորումների զգալի մասը: Դա կազդի բոլոր հայաստանցիների վրա, ընդ որում կազդի լավագույնս թե՛ սպառողների պաշտպանության առումով, թե՛ բնապահպանության, թե՛ ճանապարհների անվտանգության եւ այլ առումներով: Ամենակարեւորն այն է, որ համաձայնագիրը վերաբերում է արժեքներին՝ Հայաստանում բնակվող կանանց եւ տղամարդկանց՝ ազատությունների, իրավունքների եւ երաշխիքների միջոցով: Համաձայնագիրը վերաբերում է այդ ներուժի լիարժեք իրագործմանը», ասել է Ֆյուլեն կառավարությունում տեղի ունեցած ասուլիսում: Ս. Խ.

## ՍԴՀԿ-ՌԱԿ հանդիպում




ՌԱԿ Հանրապետական վարչությունը ներկայացնող պատվիրակությունը, բաղկացած՝ ատենապետ Հակոբ Ավետիքյանից, փոխատենապետ Կարեն Կակոյանից, ատենադպիր Սուրեն Սարգսյանից եւ դիվանի անդամ Սիրո Գեւորգյանից, երեկ քաղաքավարական այց կատարեց Երեւանում Սոցիալ դեմոկրատ Հնչակյան կուսակցության նորաբաց գրասենյակ եւ ընդունվեց ՍԴՀԿ Կենտրոնական վարչության նախագահ Սեդրակ Աճեմյանի (Լոս Անջելես), Կենտրոնական վարչության անդամ Վազգեն Գալթագչյանի (Ժնեւ), ՍԴՀԿ Հայաստանի վարչության ատենապետ Գեւորգ Պերկուպերկյանի կողմից: Հանդիպումը դարձավ առիթ արծարծելու փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող հարցերի լայն շրջանակ՝ միջկուսակցական հարաբերություններից մինչեւ սիրիահայության ներկայիս վիճակ, ներհայաստանյան քաղաքական-տնտեսական վիճակի գնահատում, Մեծ եղեռնի 100-րդ տարելիցի նախապատրաստական աշխատանքներ եւ այլն: Շուրջ մեկուկես ժամ տեւած հանդիպման ավարտին կողմերը պայմանավորվեցին պարբերական դարձնել նման հանդիպումները:

### Կոնդի մի մասում այլեւս հանրային գերակա շահ չկա

«Երեւան քաղաքի Կոնդ թաղամասում որոշ տարածքների նկատմամբ գերակա հանրային շահ ճանաչելու իրավական ռեժիմն օրենքի ուժով վերանալուց բխող միջոցառումների մասին» երեկ կառավարության ընդունած որոշմամբ լուծվեց այդ տարածքի բնակիչների համար կենսական նշանակություն ունեցող երկու խնդիր: Առաջինը՝ գերակա հանրային շահ ճանաչված տարածքում չիրացված գույքի մասով վերացվեց այդ իրավական ռեժիմը՝ սեփականատերերին հնարավորություն տալով իրենց գույքը տնօրինել ընդհանուր հիմունքով, երկրորդ՝ իրացված, սակայն չքանդված տների մասով սեփականության իրավունքը ձեռք բերողից վերադարձվեց բնակիչներին:

## ՀԲԸՄ-ն՝ սիրիահայերի կողքին

### *Մեկ միլիոն դոլար արդեն փոխանցվել է սիրիահայությանն օժանդակելու հիմնադրամին*

ՀԱՍՄԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ



Հալեպ, Դամասկոս, Քամիշլի, Լաթաքիա, եւ Հոմս: Սրանք սիրիական այն քաղաքներն են, որտեղ առավելապես բնակեցված են հայերը: Ավելի քան մեկուկես տարի Սիրիայում շարունակվող ռազմական գործողությունների պատճառով վերոնշյալ քաղաքները հայտնվել են ծանր իրադրությունում, երկու խոշոր քաղաքները՝ Դամասկոսն ու Հալեպը, իրադարձությունների ու ռմբակոծությունների կենտրոնում են: Թեպետ հայ համայնքը շարունակում է պահպանել չեզոքություն, սակայն ընթացող քաղաքացիական պատերազմը բազմաթիվ հայերի կյանք է խլել արդեն: Բազմաթիվ սիրիահայեր էլ կա՛մ լքել են իրենց տունն ու հաստատվել Լիբանանում եւ Հայաստանում, կամ շարունակում են ապրել ռազմական գոտիներում՝ առանց աշխատանքի կամ ապրուստի որեւէ միջոցի:

«Սիրիան մեր բարեկամն է, չպետք է մոռանանք, թե Սիրիան ինչպիսի օժանդակություն ցուցաբերեց 1915-ին, երբ դռները բացեց գաղթական հայ ժողովրդի առաջ: Չպետք է մոռանանք, որ 1988-ի երկրաշարժին սիրիացիներն ու սիրիահայերն առաջիններից էին, որ օգնություն ցուցաբերեցին», հիշում է Հայկական բարեգործական ընդհանուր միության (ՀԲԸՄ) կենտրոնական վարչական ժողովի անդամ, Հայ եկեղեցու Դամասկոսի թեմի քաղաքական մարմնի ատենապետ **Վազգեն Յակուբյանը**՝ հավելելով, որ դեռեւս անհայտ է Սիրիայի ու սիրիահայերի հետագա ճակատագիրը, անհայտ է, թե քաղաքական ճգնաժամն ու պատերազմը որքան կշարունակվի. հետեւաբար Հայաստանն ու հայ ժողովուրդը պետք է միասնական լինեն, համախմբվեն, որ կարողանան աջակցել եղբայրական Սիրիային, սիրիահայությանը:

Հաշվի առնելով փաստը, որ այսօր սիրիահայությունն աջակցության կարիք է զգում, ՀԲԸՄ կենտրոնական վարչական ժողովն օգոստոսի սկզբին ժողով է գումարել. սիրիահայերին օժանդակելու հարցը չի էլ քննարկվել. որոշվել է սկզբի համար մեկ միլիոն դոլարի շտապ օժանդակություն տրամադրել սիրիահայերի խնդիրները հոգալու համար: Ավելի ուշ ՀԲԸՄ-ն կոչով դիմել է սփյուռքահայությանը՝ զանգվածային ու անհատական օգնության ձեռք մեկնելու սիրիահայերին:

Տես էջ 4

## Ընթացիկ

# Ճանաչված սրտաբանի դասախոսությունը Ամերիկյան համալսարանում



Հայաստանի ամերիկյան համալսարանում՝ ամսի 26-ին դասախոսությամբ հանդես եկավ համաշխարհային ճանաչում ունեցող սրտաբան **Արամ Չոբանյանը**, որը Բոստոնի համալսարանի պատվավոր նախագահն է ու բժշկական ֆակուլտետի պատվավոր դեկանը:

Արամ Չոբանյանը Հայաստանում է Հայ օգնության ֆոնդի (ՀՕՖ) հրավերով:

Առողջապահական քննարկումը, որին մասնակցում էր դոկտոր Չոբանյանը, կազմակերպել են Հայաստանի ամերիկյան համալսարանի առողջապահական գիտությունների ֆակուլտետը եւ Հայաստանի ազգային մրցունակության հիմնադրամը:

Դոկտոր Չոբանյանի դասախոսության թեման արյան գերճնշման (հիպերտոնիա) վերահսկումն էր, ինչը Հայաստանում համարվում է առողջապահական գերխնդիր:

Արամ Չոբանյանը թեմային անդրադարձավ մի քանի տեսանկյուններից՝ կանխարգելման, բուժման եւ այլն: Սկզբում խոսեց վիճակագրական տվյալներից: Օրինակ՝ Հայաստանի ազգային մրցունակության հիմնադրամի տվյալներով՝ 2010 թվականին մեր երկրում մահվան դեպքերի 50 տոկոսը եղել է սրտանոթային հիվանդություններից: «Միացյալ Նահանգներում նման վիճակագրություն էր 1960-ականներին, սակայն հետագայում ցուցանիշն իջավ մինչեւ 30-35 տոկոսի», հավելում է բժիշկ Չոբանյանը:

Սրտանոթային հիվանդություններից մահվան ցուցանիշները նախկին Խորհրդային Միության երկրներում, ըստ նրա, այսօր գրեթե համադրելի են: Ռուսաստանում սրտանոթային հիվանդությունների տարածվածությունը հասնում է 38-40 տոկոսի: Ավելի ընդհանրացնելով ցուցանիշները՝ դոկտոր Չոբանյանը նշում է, որ ամբողջ աշխարհում սիրտ-անոթային հիվանդությունների տարածվածությունը 30-50 տոկոս է: Այս հիվանդությունների ռիսկը մարդկանց մեջ մեծ է նաեւ նախահիպերտոնիկ փուլում, այդ ժամանակ ամեն կերպ հարկավոր է կանխել հիպերտոնիկ դառնալը: Իսկ դա հնարավոր է անել արյան ճնշումն իջեցնելով, ինչի համար կան տարբեր ձեւեր՝ մարմնի քաշն իջեցնելով, որը թերեւս ամենադժվարն է, սննդակարգի փոփոխությամբ՝ ավելի շատ ուտելով միրգ-բանջարեղեն, կաթնամթերք ու ընդեղեն: Ըստ բժշկի՝ ԱՄՆ-ում հիմա շատերը սնվում են հենց նման սննդակարգով, որի միջոցով արյան ճնշումը կարելի է իջեցնել մինչեւ 8 միլիմետրով: Ֆիզիկական ակտիվության շնորհիվ արյան ճնշումը հնարավոր է իջեցնել 4-9 միլիմետրով, քաշի իջեցման միջոցով, օրինակ, 10 կիլոգրամ նիհարելով արյան ճնշումը կիջնի 5-10 միլիմետրով: Ճնշման իջեցմանը նպաստող գործոններ են նաեւ ալկոհոլի ու աղի օգտագործումը նվազեցնելը: Բժիշկ Չոբանյանի մեջբերած այս փաստերն ու դրանց արդյունավետությունն ապացուցված են տարբեր հետազոտություններով, ապացուցված է նաեւ, որ արյան ճնշման իջեցումը նվազեցնում է սրտանոթային բարդությունները: Բժիշկը կարծում է, որ մեր բնակչության 90 տոկոսի մեջ արյան ճնշումն իջեցնելը պետք է որ հնարավոր լինի:

Սակայն Հայաստանում խնդիր է արյան ճնշման դեղերի վերահսկելիությունը, ուսումնասիրությունը ցույց է տվել, որ այստեղ հիպերտոնիա ունեցողների 79 տոկոսը կանոնավոր չի խմում անհրաժեշտ դեղորայքը: Դեղերի վերաբերյալ բժիշկն ընդգծում է, որ կարելի է անգամ խմել թույլ ազդեցությամբ դեղեր՝ իրար հետ համադրելով: Սակայն չմոռանանք, որ դեղերի ընտրությունը պետք է արվի մասնագետի խորհրդով:

Դասախոսությունը ամփոփելիս Արամ Չոբանյանը կրկին հիշեցրեց, որ հիպերտոնիան խպառ վերացնել չենք կարող, սակայն դեպքերը կրճատել կարող ենք:

Դասախոսությունից հետո ներկաները, որոնց մեջ քիչ չէին բժշկական ֆակուլտետների ուսանողները, հնարավորություն ունեին ճանաչված բժշկին ուղղելու իրենց հարցերը:

Ի. Պ.

# Գյուղական համայնքներին կտրամադրվեն տեխնիկա եւ սարքավորումներ

Հայաստանի Հանրապետության եւ Միջազգային զարգացման ընկերակցության միջեւ կնքված վարկային համաձայնագրով երեկ հաստատվեց «Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման եւ մրցունակության» ծրագիրը, որի գլխավոր նպատակն արոտավայրերի բարելավումն ու անասնապահության զարգացման խթանումն է: Ծրագրում ընդգրկված համայնքներում բնակիչների կողմից ստեղծվել են «Արոտօգտագործողների միություն» սպառողական կոոպերատիվներ, որոնք հանդիսանալով ծրագրի շահառուներ, գյուղատնտեսական տեխնիկայով համալրման ու նոր տեխնոլոգիաների կիրառման կարիք ունեն: Կառավարության որոշմամբ, գյուղատնտեսության աջակցության մարզային 10 կենտրոններ կունենան անհրաժեշտ սարքավորում եւ տեխնիկա, 8 համայնքի արոտօգտագործողների կոոպերատիվներ՝ գյուղատնտեսական տեխնիկա: Դա զգալիորեն կբարելավվի այդ 8 համայնքների սոցիալ-տնտեսական վիճակը եւ կբարձրացնի գյուղատնտեսության աջակցության 10 մարզային կենտրոնների գործունեության արդյունավետությունը:

# Եկամտային հարկին անցնելը աշխատավարձերի ստացման խնդիրներ չպետք է առաջացնի

Մեկ տասնյակ օրենքներում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու օրենքների նախագծերի համաձայն, ՀՀ օրենսդիր, գործադիր (հանրապետական) եւ դատական իշխանության մարմիններում աշխատողների պաշտոնային դրույքաչափերը կկարգավորվեն այնպես, որ եկամտային հարկով հարկվելուց հետո կպահպանվի աշխատավարձի նախկին մակարդակը, որը տրվում էր մինչեւ «Եկամտային հարկի մասին» օրենքն ուժի մեջ մտնելը: Բացի այս փոփոխություններից՝ երեկ կառավարության նիստում հավանության է արժանացել նաեւ «Եկամտային հարկի մասին» ու եւս երեք օրենքներում փոփոխություններ կատարելու օրինագիծը, որի կարգավորման առարկան զինծառայողների, նրանց հավասարեցված անձանց եւ փրկարարական ծառայության աշխատողների ծառայության հետ կապված եկամուտներն են: Մասնավորապես, առաջարկվում է զինծառայողների, նրանց հավասարեցված անձանց եւ փրկարարական ծառայության ծառայողների եկամուտները ներառել եկամտային հարկով հարկման ենթակա եկամուտների խմբում:

Եկամտային հարկին անցնելու հետ կապված 2013-ի պետբյուջեում մի քանի միլիարդ դրամ է նախատեսվել, որպեսզի եկամտային հարկին անցնելու դեպքում աշխատակիցների վճարման որեւէ խնդիր չառաջանա: Պատասխանելով վարչապետ **Տիգրան Սարգսյանի**՝ այս առնչությամբ տված հարցին՝ ֆինանսների նախարար **Վաչե Գաբրիելյանը** նշեց, որ այս գործում ռիսկային կարող են լինել հիմնականում փոքր ՊՈԱԿ-ները եւ ՀՈԱԿ-ները, որոնց հաշվապահներն ուսուցում պետք է անցնեն ըստ հաստատված միջոցառումների ծրագրի:

«Մեզ համար ռիսկային կարող են լինել փոքր սուբյեկտները: Անհրաժեշտ է, որպեսզի դրանց հաշվապահները ճշգրիտ ձեւակերպումներ տան: Դա վերաբերում է նաեւ համայնքներին, մանավանդ փոքր համայնքներին, եւ այս ամիսների ընթացքում բոլորին պետք է վերապատրաստենք», ասաց վարչապետը, ավելացնելով, որ պետք է ուշադրության կենտրոնում պահել այս հարցը, որ հունվարի 1-ից աշխատավարձերի ստացման որեւիցե խնդիր չլինի: «Բոլոր սուբյեկտների համար համապատասխան ֆինանսական միջոցները բյուջեում նախատեսված են, այսինքն՝ ֆինանսական միջոցների պրոբլեմ մենք չունենք, ուղղակի ճիշտ կազմակերպման խնդիր կա», նշեց նա:

## ԱԿՆԱԲՈՒԺՈՒԹՅՈՒՆ

# Քայլեր՝ ուղղված մանկական կուրությունը կանխելուն

**Այս տարի նշվում է «Հայկական ակնաբուժության նախագիծ» (AECP) կազմակերպության հիմնադրման 20-ամյակը: 20 տարիների ընթացքում ամերիկահայ ակնաբույժ Ռոջեր Օհանեսյանի հիմնադրած բարեգործական այս կազմակերպությունը մեծ ներդրում է ունեցել Հայաստանում ձեռքբերովի կուրությունը կանխարգելելու եւ ժամանակակից ակնաբուժությունն անգամ հեռավոր գյուղերում ապրող մարդկանց համար հասանելի դարձնելու գործում:**

**AECP-ն Հայաստանում անցկացրել է նաեւ ակնաբուժական միջազգային համաժողովներ, 12-րդ համաժողովն էլ անցկացվեց այս տարի՝ սեպտեմբերի 14-15-ին, համաժողովի բացումը կատարեց Ռոջեր Օհանեսյանը, իսկ ներկաների թվում էին նաեւ Հայաստանում Միացյալ Նահանգների դեսպան Ջոն Հեֆերնը, առողջապահության նախարար Դերենիկ Դումանյանը, միջազգային ճանաչում ունեցող վիրաբույժներ, որոնք զբաղվում են վաղահասության ռետինոպաթիայի բուժմամբ եւ ժամանել էին ԱՄՆ-ից ու Եվրոպայից:**

**Համաժողովի թեման վաղահասության ռետինոպաթիայի բուժումն էր, նաեւ ներկայացվեց վիրաբուժական նոր մեթոդ, որը կարող է վերականգնել երեխաների տեսողությունն այն դեպքում, երբ բուժման մյուս ձեւերն այդ անել չեն կարող: Միացյալ Նահանգներում նման վիրաբուժություն կատարում են վեց վիրաբույժներ, սակայն Կովկասում դա դեռ անհասանելի է:**

**«Արմինյն միրոր-սփեքթեյթր» թերթից տեղեկանում ենք, որ «Հայկական ակնաբուժության նախագիծը» հանձն է առել տարածաշրջանում վաղահասության ռետինոպաթիայի բուժման փորձի փոխանակման գործը՝ բացելով Մանկական կուրությունը կանխարգելող գերազանցության իրենց կենտրոնը:**



**Միջազգային համաժողովի ընթացքում հայ բժիշկները հնարավորություն ունեցան փոխանակելու իրենց փորձն ու գիտելիքները հարեւան երկրների գործընկերների հետ: Համաժողովի նպատակը հենց դա էր՝ գիտելիքի ու փորձի փոխանակման միջոցով նվազեցնել վաղահասության ռետինոպաթիայի դեպքերը, ի դեպ Հայաստանում արդեն հաջողվել է արմատականորեն կրճատել դրանք:**

**«Հայկական ակնաբուժության նախագիծը» իր աշխատանքները Հայաստանում սկսել է 1992 թվից, իսկ վաղահասության ռետինոպաթիայի ծրագիրը սկսեց 2010-ից՝ համագործակցությամբ Միացյալ Նահանգների միջազգային զարգացման գործակալության հետ (USAID):**

Ի. Պ.

# Գյումրիում կառուցված 1756 բնակարանները շահագործման կհանձնվեն հոկտեմբերին

**Աղետի գոտու բնակավայրերում պետական աջակցությամբ իրականացվող բնակարանաշինական ծրագրի շրջանակներում Գյումրու «Մուշ-2» թաղամասում կառուցված 33 եւ «Անի» թաղամասում կառուցված 5 բազմաբնակարան շենքերի արտաքին բարեկարգման եւ դրանց 1756 բնակարանների ներքին հարդարման աշխատանքների որակի համապատասխանությունն ուսումնասիրելու նպատակով,**

**ՀՀ քաղաքաշինության նախարար Սամվել Թադեւոսյանի սեպտեմբերի 25-ի հրամանով ստեղծվել է հանձնաժողով: Վերջինիս կազմում են նախարարության քաղաքաշինական ԾԻԳ-ի եւ քաղաքաշինական պետական տեսչության մասնագետներ, ինչպես նաեւ «Շիրակ կենտրոն» ՀԿ-ի նախագահը:**

**Ինչպես տեղեկացրել է «Շիրակ կենտրոնը», արդեն այս օրերից հանձնաժողովի անդամները հիշյալ ԾԻԳ-ի տնօրենի տեղակալի գլխավորությամբ նորակառույց թաղամասում անցնելու են շենք առ շենք եւ բնակարան առ բնակարան, գրի են առնելու հայտնաբերվելիք թերությունները, ապա դրանք տրամադրվելու են շինարարությունն իրականացնող «Գլենդել Հիլզ» ընկերության ներկայացուցիչներին՝ մեկշաբաթյա ժամկետում թերությունները վերացնելու համար: «Շիրակ կենտրոնի» փոխանցմամբ, միայն դրանից հետո հանձնաժողովականները կստորագրեն բնակելիների արտաքին եւ ներքին հարդարման աշխատանքների ընդունման ակտը: «Մուշ-2» թաղամասում մեկ օր առաջ անցկացված խորհրդակցության ժամանակ քաղշիննախարարը չի բացառել նաեւ այդ աշխատանքների փուլ առ փուլ ընդունման հնարավորությունը:**

Գ. Մ.

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան ԻԱ տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
**«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ**
Երեւան 0010, Հանրապետութեան 47
e-mail: azg@azg.am, azg2@arminco.com
**www.azg.am**
Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ հեռ. 060 271117
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ հեռ. 060 271113
Հաշվապահութիւն (գովազդ) հեռ. 582960, 060 271112
Լրագրողների սենեակ հեռ. 060 271118
Համակարգչ. ծառայութիւն հեռ. 060 271115
***Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն***
հեռ 060 271114, 010 529353
Համակարգչային շարուածքը՝ «Ազգ» թերթի

Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատուութիւն չի կրում:

“AZG” Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 60 271117
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

# Վարչապետը գոմեշի միս ներկրողների հետ առնչություն չունի

Սննդամթերքի անվտանգության պետական ծառայության պետ **Աբրամ Բախչագուլյանը** երեկ կառավարության նիստում վարչապետ **Տիգրան Սարգսյանի** առաջարկով հրապարակեց այն ընկերությունների անունները, որոնք Հայաստան գոմեշի միս են ներկրում Հնդկաստանից: Մասնավորապես, 2011-ին 10,3 հազար տոննա գոմեշի միսը ներկրել են 6 ընկերություններ: «Ալեֆս Գրիգի» բաժինը կազմել է ընդհանուրի՝ 61,2 տոկոսը, «Պարգեւ» ընկերությանը՝ 17 տոկոսը, «Մոկոնաքինը»՝ 9,5 տոկոսը, «Արմեն Համիկ եղբայրներինը»՝ 6,5 տոկոսը, «Ունիվերսամ Ավանինը» 3,5 տոկոսը, «Մուշինը»՝ 2,3 տոկոսը:

2012 -ի 9 ամիսներին Հայաստան են ներկրվել 5284 տոննա գոմեշի մսի բրիկետներ 5 կազմակերպությունների կողմից: «Պարգեւ» ՍՊԸ-ն՝ 34,3 տոկոս, «Արմեն Համիկ եղբայրները» 23,52 տոկոս, «Ալեֆս Գրիգը» 18,1 տոկոս, «Ունիվերսալ Ավանը»՝ 11 տոկոս:

Աբրամ Բախչագուլյանի ներկայացմամբ՝ հայկական ընկերությունները գոմեշի միս ներկրում են հնդկական այն կազմակերպություններից, որոնք ունեն առնվազն 10 տարվա աշխատանքային փորձ, միջազգային ստանդարտներին համապատասխան սեփական սպանդանոց, մսի վերամշակման արտադրամաս, սառցարան, միջազգային արտոնագրող մարմինների կողմից տրված՝ վտանգի աղբյուրների վերլուծության եւ կրիտիկական կետերի հսկման (HACCP) համակարգի եւ ստանդարտների միջազգային կազմակերպության նվազագույնը ISO 9001:2000 ստանդարտի արտոնագրեր: Այդ մսի նկատմամբ վերահսկողություն իրականացնում է Հնդկաստանում ՀՀ սննդամթերքի անվտանգության գծով ներկայացուցիչը: «Այս 2 տարվա ընթացքում մեկ դեպք է եղել, երբ տեսողական զննմամբ բեռը կասկած է հարուցել», ասաց Աբրամ Բախչագուլյանը:

Սննդամթերքի անվտանգության ծառայության պետի ելույթից հետո վարչապետը առաջարկեց պետական եկամուտների կոմիտեի նախագահ **Գագիկ Խաչատրյանին**՝ ներկայացնել, թե այս ընկերությունները ինչպես են կատարում իրենց հարկային պարտավորությունները: Ինչին ի պատասխան կոմիտեի նախագահն ասաց, որ ուսումնասիրությունն ընկերություններում անընդհատ շարունակվում են եւ, որ հարկային պարտավորությունների հետ կապված առանձին տեղեկանք կներկայացվի:

Այնուհետեւ Տիգրան Սարգսյանը հայտարարեց, որ հայտնի քաղաքական ուժերը փորձում են զրպարտել իրեն՝ կապելով իր անունը Հնդկաստանից միս ներմուծող այս ընկերությունների հետ: «Ցանկանում եմ ձեզ տեղյակ պահել, որ թվարկված այս 5 ընկերությունների հետ որեւիցե առնչություն ես բացարձակապես չունեմ՝ ո՛չ ընկերներ, ո՛չ բարեկամներ, քանված անձինք այս ընկերությունների հետեւում, ինձ հետ կապված չկան», նշեց վարչապետը:

**Ա. Ս.**

# 8-ամյա աղջիկը կմնա եւ կապրի իր ընտանիքում

## *Orange հիմնադրամը եւ Վորլդ Վիժն Հայաստանը ամփոփում են «Պահենք երեխաներին ընտանիքում» SMS-հանգանակության օգոստոս ամսվա արդյունքները*

Երեկ Orange Հիմնադրամը եւ Վորլդ Վիժն Հայաստանը հայտարարեցին «Պահենք երեխաներին ընտանիքում» SMS բարեգործական նախագծի երրորդ փուլի՝ օգոստոս ամսվա արդյունքների մասին: Նախագիծը թույլ է տալիս Orange-ի բաժանորդներից յուրաքանչյուրին աջակցություն ցուցաբերել այն հայ մանուկներին, որոնց ընտանիքները ֆինանսական դժվարությունների պատճառով իրենց երեխաներին հանձնում են պետական հաստատությունների հոգածությանը:

Ուղարկելով SMS 1234 կարճ համարին՝ Orange-ի բաժանորդները հանգանակում են 100, իսկ 5678 համարին՝ 500 դրամ: Օգոստոս ամսին Orange-ի բաժանորդները հանգանակել են 281 000 ՀՀ դրամ: Ինչպես եւ հայտարարվել էր, Orange Հիմնադրամը կհանգանակի նույնքան գումար, որքան բոլոր բաժանորդները միասին, այսինքն՝ օգոստոս ամսվա դրամահավաքի արդյունքում Orange Հիմնադրամը Վորլդ Վիժն Հայաստանին կփոխանցի 562.000 ՀՀ դրամ: Այս գումարը Վորլդ Վիժն Հայաստանը կօգտագործի Շիրակի մարզում բնակվող Սպարտակի եւ Արմինեի ընտանիքին օգնելու համար: Վերջիններս ունեն 3 երեխա եւ ֆինանսական դժվարությունների պատճառով իրենց 8-ամյա ավագ դստերը ստիպված են եղել հանձնել գիշերօթիկ հաստատության հոգածությանը: Ընտանիքի հայրը՝ Սպարտակը, հմուտ ավտոմեխանիկ է, սակայն անհրաժեշտ գործիքներ չունենալու պատճառով չի կարողանում բավարար գումար վաստակել ընտանիքի կարիքները հոգալու համար: Հանգանակված գումարով հնարավոր կլինի ձեռք բերել անհրաժեշտ գործիքների հավաքածու, որն էլ հնարավորություն կտա Սպարտակին ավելի շատ գումար վաստակել եւ իր 3 երեխաներին պահել ընտանիքում:

«Նախեւառաջ ցանկանում ենք շնորհակալություն հայտնել այս նախաձեռնությանը մասնակցած մեր բաժանորդներին: Orange Հիմնադրամը կրկնապատկել է նրանցից յուրաքանչյուրի ներդրումը: Հետաքրքրական է նշել, որ SMS-հանգանակության օգոստոսյան փուլի մասնակիցներից շատերը նախագծին մասնակցում են առաջին անգամ, ինչը նշանակում է, որ նորանոր մարդիկ են ցանկանում մասնակցել եւ իրենց լուման ներդնել այս նախագծի իրականացման գործում: Նախագծի ամենակարեւոր բաղկացուցիչներից է այն, որ մեր բաժանորդներից յուրաքանչյուրը կարող է քայլ անել՝ օգնելու երեխաների, ովքեր ունեն ծնողներ, սակայն ստիպված են մեծանալ խնամքի հաստատություններում: Ծրագիրը շարունակական է լինելու,



եւ այս ամիս մենք կրկին սպասում ենք հանգանակությունների, որոնք հնարավորություն կտան շատ այլ երեխաների կյանքում բերել շոշափելի փոփոխություններ», ասաց Հայաստանում Orange Հիմնադրամի խորհրդի նախագահ **Ֆրանսիս Ժելիբերը**:

«Մենք շնորհակալ ենք Orange-ի բաժանորդներին տրամադրած յուրաքանչյուր դրամի համար: Նշված հանգանակությունը նոր էջ կբացի այս ընտանիքի կյանքում եւ հնարավորություն կտա այս աղջնակին վայելելու ծնողների ամենօրյա ներկայությունը, խնամքն ու հոգատարությունը», ասաց **Լուսինե Սիմոնյանը**՝ Վորլդ Վիժն Հայաստանի «Շահագրգիռ կողմերը միասին հանուն Հայաստանում Երեխաների պաշտպանության համակարգի հզորացման» ծրագրի համակարգողը:

Վորլդ Վիժնը բազմամյա փորձ ունի խոցելի եւ անապահով ընտանիքների հետ աշխատանքի ոլորտում եւ իր փորձագետների եւ սոցիալական աշխատողների ջանքերով կկազմակերպի մասնագիտական աշխատանքներ ընտանիքների հետ: Այս աշխատանքների առանցքային նպատակն է բարելավել յուրաքանչյուր ընտանիքի սոցիալ-տնտեսական վիճակը, ինչի արդյունքում ծնողները կկարողանան երեխաներին պահել ընտանիքում:

«Պահենք երեխաներին ընտանիքում» SMS բարեգործական նախագիծը կտեւի մինչեւ 2013 թ. հունիս ամիսը: Այս ընթացքում Orange Հիմնադրամը պարբերաբար կտեղեկացնի հանգանակված գումարի, ինչպես նաեւ այն երեխաների եւ ընտանիքների մասին, ովքեր ընդգրկվել են նախագծում:

Անձնական տվյալների գաղտնիության պահպանման նկատառումներով նախագծում ընդգրկված ընտանիքի անդամների ազգանունը նշված չէ:



# Նոր սցենարներ՝ նախագահական ընտրություններին ընդառաջ

*1-ին էջից*

**Պետք է ենթադրել, որ մինչ մյուս հնարավոր թեկնածուները մլուլ են տալիս, նախագահ Սարգսյանը որոշել է լավագույնս օգտագործել իր ժամանակն ու հնարավորությունը եւ սկսել անձամբ պայքարել կոռուպցիայի եւ «ատկատների» դեմ՝ լավ գիտակցելով, որ նորից նախագահ դառնալու այլ ճանապարհ չկա, քան կարգի բերել տան ներսը. Հայաստանի քաղաքացիների վրա որեւէ խոսքում այլեւս չի ներգործում, խոսքը, խոստումները վաղուց արդեն կորցրել են իրենց արժեքը, հիմա միայն փաստացի գործ է պահանջվում: Հավանաբար պետք է սպասել, որ հաջորդը նախագահ Սարգսյանը խորհրդակցություն կանի առողջապահության նախարարությունում, հետո տրանսպորտի եւ կապի, հետո մյուս նախարարություններում: Երբ կոռուպցիա ներառող նախարարություններն ավարտվեն՝ որոշ գլուխներ, այնուամենայնիվ, կթռչեն, որովհետեւ ի վերջո անհասկանալի կմնա՝ մի՞թե տարիներ շարունակ ոչ ոք չի նկատել, որ պաշտպանության նախարարությունը նույն մատակարարներից է օգտվում, ու այդ մատակարարների ողջ բիզնեսը կառուցված է «օպտվի» գնորդ ՊՆ-ի փողերի վրա: Կամ՝ բանակի զինվորները, որ տարիներով բողոքում էին չծամվող ու ռետինի պես մսից, ո՞նց է, որ այդ բողոքը բանակի ղեկավարությունը չէր լսում ու տեսնում. ընդամենը պաշտպանության նախարարը պետք է զորանոցի ճաշարանում մեկ անգամ ճաշեր: Սակայն այս բոլորը այժմ քաղաքական ենթատեքստ է ստանում, քանի որ Հայաստանը մոտենում է նախագահական ընտրությունների եզրագծին, ընտրողներ են նաեւ զինվորների ծնողները, այնպես որ նախագահը ուշացումով, բայց ձեռքը զարկել է գործի:**

**Դե քանի որ խոսեցինք նախագահական ընտրություններից՝ անդրադառնանք, որ սեպտեմբերը վերջանում է, սակայն նախագահի մյուս թեկնածուների առումով դեռեւս ակտիվություն չկա: Նկատենք, որ եթե նախագահական ընտրությունները փետրվարին են, ու դրանից հանենք մեկ ամիս՝ դեկտեմբերի 15-ից մինչեւ հունվարի 15-ի նոր տարվա շրջանը, ապա նախագահական ընտրություններին մնացել է ուղիղ երեք ամիս, այդ իմաստով՝ իսկապես որ զարմանալի է հստակեցումների պակասը: Ոմանք սպասում էին սեպտեմբերի 21-ին, քանի որ ավանդաբար ՀԱԿ առաջնորդն այդ օրն ինչ-որ որոշակիացում անում է, բայց սեպտեմբերի 21-ն անցավ, ու հանկարծ բոլորը հասկացան, որ հավանաբար ինչ-որ ստվերային գործընթացներ կան, որոնք դեռեւս չեն ավարտվել, այդ պատճառով ոչ ոք դեռ ոչինչ չի ասում:**

**Ընդդիմության միասնական թեկնածուի մասին խոսակցությունները, եթե ժամանակի առումով նայենք, այդ իմաստով պարզապես անլուրջ են: Նախապես միասնական ընդդիմություն պետք է լիներ մինչեւ հիմա, որ նախագահի միասնական թեկնածու լիներ, ու դա պետք է որեւէ ընտրությունից գոնե մի հինգ ամիս առաջ լինի:**

**Ուրեմն՝ ՀԱԿ առաջնորդ Լեւոն Տեր-Պետրոսյանն ինքը երեւի գիտակցում է, որ չի կարող այլեւս ոչ միայն միասնական թեկնածու լինել, այլեւ անգամ առաջադրվել: ՀԱԿ-ը նորանալու խնդիր ունի, քանի որ ի՞նչ է ՀԱԿ-ը՝ կուսակցությունների միավորո՞ւմ, կուսակցությո՞ւն, ովքե՞ր են նրա դեմքը, արդյո՞ք այդ մի քանի պատգամավորը խորհրդարանում, որոնք, միեւնույն է, իրարից խիստ առանձնակի գործունեություն են ծավալում, նրանցից ամեն մեկը փորձում է աչքի ընկնել իր գիտելիքներով ու նախաձեռնություններով, բայց ընդհանուր՝ միասնական մոտեցումներով հստակ չեն փայլում: Այսինքն՝ հենց ՀԱԿ-ը պետք է վերակառուցվածքավորվի (կամ կազմաքանդվի), նոր լիդեր հասունացնի, եւ այդ լիդերի հասունացումը դեռ ընթանալու է երկար ու ցավագին. համենայն դեպս խորհրդարանում հայտնված դեմքերի մեծ մասի հետ մեր հասարակությունը ոչ լավ հիշողություններ է կապում, ու նրանց մեջ դրականորեն առանձնանում է Նիկոլ Փաշինյանը: Տողերիս հեղինակը Նիկոլ Փաշինյանից խորհրդարանում սպասում էր առավելաբար պոպուլիզմ, մինչդեռ տեղի ունեցած երկու նիստերը բացահայտեցին իսկապես ըստ էության աշխատող պատգամավորի, այնպես որ ՀԱԿ-ում ուզեն-չուզեն, բնական ընտրություն է կատարվելու, իսկ դրա համար ժամանակ է պետք լինելու: Հին լիդերն այլեւս պատմություն է, նորը դեռ չկա (կամ չունի արտահոսքը, թե ՀԱԿ-ում որոշել են, որ Լեւոն Զուրաբյանն է առաջադրվելու, եթե Ծառուկյանը չառաջադրվի ու նրան չպաշտպանեն), ստացվում է, որ այստեղ այլեւս պատրաստ չեն նախագահական ընտրությունների:**

**ՀՅԴ-ն դեռ չի կողմնորոշվել, եւ կարծեմ առիթ ունեցել ենք ասելու, որ Րաֆֆի Հովհաննիսյանի թեկնածությունը պաշտպանելու ենթադրությունները մենք չենք ընդունում, էլ չասած, թե ընդդիմության միասնական թեկնածու լինելն արդեն իսկ անհավանական է Ր. Հովհաննիսյանի դեպքում: Թեեւ վերջերս էլ արտահոսք եղավ, թե Րաֆֆի Հովհաննիսյանն ու Գագիկ Ծառուկյանը հանդիպել են ու խոսել ընտրություններից: Իսկ բուն՝ Ր. Հովհաննիսյանի վերջին նամակը, ուղղված Սերժ Սարգսյանին՝ ցույց է տալիս, որ նորմալ ընտրությունների ակնկալիքը նախագահի թեկնածու համարվող մարդը ունի մեկ այլ թեկնածուից՝ երկրի գործող նախագահից, եւ վստահ էլ չէ, որ այդպիսի ընտրություններ տեղի կունենան:**

**Ուրեմն քիչ քննենք, որ նորից ու նորից նախագահական ընտրությունների հարթակը մնացել է իշխող ուժին ու նրա թեկնածուին եւ մյուս դոմինանտ ԲՀԿ-ին, ու վերջինիս շուրջն էլ հենց հետաքրքրական զարգացումներ են տեղի ունենում: Մինչ այս մասին խոսելը՝ նշենք, որ մեզ զարմացնում է Ռոբերտ Քոչարյանի լռությունը: Միգուցե դա պայմանավորված է նրանով, որ Քոչարյանը բոլորովին էլ լուռ չէ, այլ ստվերային միջոցներով կառավարում է քաղաքական շատ գործընթացները: Ու այդ կառավարման պատասխանն է Վարդան Օսկանյանի շուրջը տեղի ունեցողը, քանի որ մի պահ խոսվում էր, թե գուցե Ռոբերտ Քոչարյանն իր փոխարեն ուզում է առաջ մղել Օսկանյանին: Բայց եղավ «փողերի լվացման» գործը, ու հասկանալի դարձավ, որ եթե անգամ ինչ-որ պահ այդպիսի գաղափար է եղել, ապա հետագայում ֆիզիկական մաշվածքի է ենթարկվել ու նոր խոսակցությունները (լուրերի մակարդակով), թե հնարավոր է, որ Օսկանյանին անձեռնմխելիությունից զրկելու միջնորդություն բերի գլխավոր դատախազը Ազգային ժողով, հասկանալի են դարձնում, որ ԲՀԿ-ում 180 տոկոսով ամեն ինչ փոխվել է: Եկավ-գումարվեց Ադիբեկյանի կանխատեսումը, թե այսպես ու այսպես, հանրության մեջ միասնական թեկնածուի պահանջարկ է վայելում ԲՀԿ առաջնորդ Գագիկ Ծառուկյանը: Հիմա այլ արտահոսքեր կան՝ իբր նախագահական ընտրություններից հետո Ծառուկյանը ազգային համաձայնության կառավարություն է ձեւավորելու, իհարկե՝ Սերժ Սարգսյանին սատարելուց հետո:**

**Այս շիլաշփոթից հասկանալի է դառնում մեկ բան՝ որ նախագահական ընտրություններին ընդառաջ բոլորովին նոր սցենարներ են աշխատելու, ու դրա մասին գաղտնորեն գիտեն հիմնական դերակատար ուժերը: Ամեն ինչ ավելի հստակ կերեւա եկող շաբաթ, Ազգային ժողովում, 2011 թվականի բյուջեի կատարողականի քննարկման ժամանակ: Գլխավոր հստակեցումն այն է լինելու, թե արդյո՞ք փորձ է կատարվում ազդեցությունների քոչարյանական արիալը փոխարինել զուտ ծառուկյանականով՝ առանց Քոչարյանի, քանի որ բոլոր դեպքերում Սերժ Սարգսյանի համար ավելի կանխատեսելի գործընկեր է Ծառուկյանը: Երբ դա պարզվի՝ հասկանալի կլինի ՀՅԴ-ի, ՀԱԿ-ի դիրքորոշումը, իսկ հստակեցումներն իրար կհաջորդեն լույսի արագությամբ:**

# Հայկական սփյուռքը եւ Հայոց ցեղասպանության միջազգային դատապարտումը

ԱՐԱՄ ՍԱՖԱՐՅԱՆ

***Վերջին շաբաթներին Սիրիայի հայության հետ պատահած դեպքերը առիթ դարձան խորհելու մեր հավաքականության անբաժանելի մաս կազմող հայոց սփյուռքի ապագայի մասին: Յուրաքանչյուր հալեպահայ կամ բեյրութահայ ձեզ կվկայի, որ թուրքական իշխանությունները միշտ էլ բծախնդրորեն հետեւել են Մերձավոր եւ Միջին Արեւելքի հայկական կյանքին եւ ունեցել են մի հատուկ ծրագիր հնարավոր բոլոր միջոցներով հայերին այս տարածաշրջանից ավելի հեռու տեղեր տեղափոխելու համար: Դուք անմիջապես կհարցնեք, թե ինչպես կարող է դա պատահել: Կաշխուժանան նաեւ զանազան կոնսպիրոլոգիական տեսությունների կողմնակիցները: Կծնվեն հարցեր, որոնց գործնականում պատասխանելը շատ դժվար է: Փաստը մնում է փաստ, որ իրաքյան պատերազմի տասը տարիների ընթացքում իրաքահայության թիվը առնվազն հինգ անգամ փոքրացավ: Իրանահայերն ասում են, որ արտագաղթը աճում է նաեւ այնտեղ: Իրանահայերը գնում են դեպի Ամերիկա ու Եվրոպա, գլխավորապես ավելի լավ կյանքի հետեւից: Սիրիահայության կյանքը այս օրերին շատ ծանր է, բայց Դեր Զորի հայերի ժառանգները շատ դիմացկուն են եւ լավ կազմակերպված: Այս մտորումները մի առիթ են քննարկելու «հայկական աշխարհաքաղաքականության» մարտահրավերը եւ ուսումնասիրելու՝ ինչպես կազմակերպել համազգային համախմբումը մեր օրերի մարտահրավերներին ի պատասխան:***

### Իրական եւ կեղծ մարտահրավերներ

Բոլորս գիտենք, որ այսօրվա հայկական սփյուռքը երկու հիմնական շերտ ունի: Առաջինը Մեծ եղեռնից փրկվածներն են, որոնք աշխարհի մի քանի տասնյակ պետություններում ապաստանեցին, կազմակերպեցին իրենց հոգեւոր-մշակութային եւ նույնիսկ ազգային քաղաքական կյանքը, կառուցեցին եկեղեցիներ եւ դպրոցներ, հրատարակեցին թերթեր ու ամսագրեր, ինտեգրվեցին հյուրընկալ հասարակություններում, դարձան նոր հայրենիքների աշխատասեր ու նվիրված քաղաքացիներ, փորձեցին պահպանել իրենց ինքնությունը՝ հաճախ մեծ դժվարությունների դիմակայելով:

Երկրորդ շերտը ձեւավորվեց վերջին երկու տասնամյակում, երբ փլուզվեց Խորհրդային Միությունը, բացվեց երկաթյա վարագույրը եւ նոր օրերի դժվարությունները զանգվածային միգրացիոն գործընթացների պատճառ դարձան:

Հանուն արդարության պետք է ասել, որ նման գործընթացներ ծավալվեցին Արեւելյան Եվրոպայի եւ նախկին ԽՍՀՄ-ի համարյա բոլոր ժողովուրդների մեջ: Բայց դա չի կարող սփոփանքի պատճառ լինել եւ հետ պահել մեզ այս երեւույթները հասկանալ փորձելուց եւ սրա հետեւանքները հայապահպանության համար կանխատեսելուց: «Խորհրդային» հայերը ավելի քիչ են եկեղեցի հաճախում, ավելի արագ են ուծանում տեղացիների մեջ: Նրանցից շատերը գերադասում են շփվել իրենց նման «խորհրդայինների», քան հին սփյուռքահայերի հետ: Տորոնտոյում իմ հին ծանոթներից մեկը ինձ պատմում էր, որ նոր կանադահայերը կենցաղում ավելի շատ ռուսների, ուկրաինացիների ու հրեաների հետ են շփվում, քան նախկին սիրիահայերի, լիբանանահայերի եւ եգիպտահայերի: Ուկրաինայում վերջին քսանհինգ տարում հաստատված հայերի թիվն աճել է առնվազն քսանհինգ անգամ: Եվ Ուկրաինայի հայ համայնքը երրորդն է Ռուսաստանից եւ ԱՄՆ-ից հետո: Ռուսաստանում հայ համայնքն այսօր ամենամեծն է ամբողջ աշխարհում: Այստեղ տասնյակհազարավոր հայեր ընդգրկող քաղաքներ ու տարածքներ կան այնպիսի շրջաններում, որտեղ քսանհինգ տարի առաջ մեկ-երկու հայ գտնելը մեծ ուրախություն էր: Նույնը՝ ԱՄՆ-ում, նույնը՝ եվրոպական շատ երկրներում: Նոր հայերի հոծ զանգվածներ ամենուրեք դիմակայում են տնտեսական գլոբալ ճգնաժամի ծանր հետեւանքներին, փորձում են ինքնակազմակերպվել եւ, մասնավորապես ինտեգրվել սփյուռքյան կառույցներում, բայց նաեւ ավելի արագ ուծանում են, կարծես դրանով փորձելով հարմարվել նոր պայմաններին:

Մարդասպան Ռամիլ Սաֆարովի էքստրադիցիայի, արդարացման ու հերոսացման խայտառակ օրերին, մենք ուշադրությամբ եւ գորովանքով էինք հետեւում մեր հայրենակիցների կազմակերպված բողոքի դրսեւորումներին աշխարհի շատ երկրներում: Ես ուրախությամբ մտածում էի, որ մեր այդ քույրերն ու եղբայրները իրենց ամենօրյա բազում հոգսերում ժամանակ ու ցանկություն ունեն համազգային խնդիրների լուծմանը մասնակցելու համար:

Ինտերնետը, սփայփը եւ հեռուստատեսությունը վիրտուալ հանրություն են ստեղծում աշխարհում եւ մոտեցնում մարդկանց: Այս ճանապարհով հայախոսությունն ու հայկական կյանքին տեղյակ լինելը դառնում են կենսունակ եւ շարունակական: Դրանց որակն ու խորությունը պահելը, անշուշտ, ինքնուրույն հարց է եւ հատուկ ուսումնասիրության առարկա: Բայց նոր-նոր ձեւավորվող համահայկական ցանցերը հնարավորություն են տալիս տեղյակ լինել, ինքնակազմակերպվել, անհրաժեշտ դեպքում նաեւ բողոքել անարդարությունների դեմ:

Ամեն մի փորձագետ կհաստատի, որ համահայկական իրականության մեջ, վերջին հիսուն տարում ոչինչ այնպես չի համախմբել սփյուռքահայ համայնքներին, որքան Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման եւ դատապարտման գործընթացը: Մեր արդար պահանջի հետապնդման գործում Հայաստանի եւ սփյուռքի հաջողություններն այնքան ակնառու են, որ քաղաքակիրթ պետությունների մեծագույն մասում թե՛ իշխանությունները, թե՛ կիրթ մարդիկ հարգանքով եւ ուշադրությամբ են վերաբերվում խնդրին: Հայոց ցեղասպանության դատապարտման միջազգային գործընթացն ուժ է տվել աշխարհի հայերին, լսելի դարձրել նրանց ձայնը, ուղղել է նրանց մեջքը, արժանապատվորեն հիմնավորել է նրանց գոյության իրավունքը հյուրընկալ հասարակություններում:

### «Այլեւս երբեք»

Սա հրեա ժողովրդի գաղափարախոսությունից ծնված կարգախոսն է, որը ձեւակերպվեց Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո: Հրեական ողջակիզումից փրկված դասն այն էր, որ հրեաները ոչ մի դեպքում պետք է թույլ չտան որեւէ ոտնձգություն իրենց հավաքականության դեմ: Աշխարհում գործող հզոր հրեական կազմակերպությունները ուշադրությամբ հետեւում են Իսրայելի եւ հրեաների նկատմամբ վերաբերմունքին, բողոքում եւ նույնիսկ պատժում հրեատյացությունը: Միջազգային ամենապատկառելի կազմակերպությունները հրեական լոբբիստների հորդորների ներքո քանի-քանի բանաձեւեր ու որոշումներ են ընդունել տվել հրեատյացության զանազան դրսեւորումները դատապարտելու ուղղությամբ: Պատմությունը հեռացնում է մեզ Հոլոքոսթից, բայց այդ պայքարը չի թուլանում, ընդունում է նոր ձեւեր եւ ծառայում է հրեա հավաքականության անվտանգության երաշխավորման գործին: Աշխարհում շատ կան մարդիկ, որոնք դժգոհում, նույնիսկ բողոքում են այս գործընթացի առանձին դրսեւորումների դեմ: Բայց մեր օրերի քաղաքակիրթ աշխարհում ոչ մի կիրթ ու լուրջ մարդ իրեն թույլ չի տա արհամարհական ու անհարգալից խոսել այն հրեաների մասին, որոնք երկու հազար տարի պետություն չեն ունեցել, եւ ամենաանհավանական ջանքերի գնով պահպանել ու զարգացրել են իրենց ազգային ինքնագիտակցությունը:

Հիմա դառնանք մեզ: Թուրքիայի եւ Ադրբեջանի ազգայնական ուժերի հավաքական ջանքերը հայության արդար պահանջի դեմ դարձել են աննախադեպ կազմակերպված եւ ընդունել են սանձարձակ ձեւեր: Բայց պետք է հասկանանք, որ այս նոր գործելաոճը անհանգստություն եւ նույնիսկ սպառնալիք է ստեղծում ոչ միայն հայության, այլեւ բոլոր հասարակությունների համար, որտեղ դրանք դրսեւորվում են: Պատմական հիշողությունն ուրանալը եւ կեղծարարությունը անազնիվ գործ են եւ պետք է պարզապես անազնիվ ու անսկզբունք լինել այդ գործելաոճին տուրք տալու համար: Կարծում եմ, որ մեր օրերի աշխարհի ազնիվ ու շիտակ մտածողները, իսկ դրանք մեծամասնություն են, առնվազն չեն խանգարելու հայերի ինքնակազմակերպմանը՝ հանուն Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացի շարունականության: Այնքան ժամանակ, քանի դեռ հարցը չի լուծվել եւ պատմական արդարությունը չի վերականգնվել:

### Մտորումներ մեր անելիքի մասին

Քսանմեկ տարեկան Հայաստանի Հանրապետությունն աննախանձելի աշխարհաքաղաքական եւ տնտեսական իրավիճակում է: Հայաստանից ավելի շատ հեռանում են, քան Հայաստան վերադառնում եւ այստեղ հաստատվում: Մենք անընդհատ փնտրում ենք ադապտացիոն նոր մեխանիզմներ, որովհետեւ Հայաստանն առանց Սփյուռքի պատկերացնելն ուղղակի անհնար է: Մենք չենք կարող սիրիահայերին զանգվածաբար տեղավորել Հայաստանում, որովհետեւ դրա համար բավարար տնտեսական հնարավորություններ ուղղակի չկան: Բայց մենք պարտավոր ենք աջակցել նրանց յուրաքանչյուր որոշմանը, ինչպես այդ մասին հայտարարեց Հայաստանի Հանրապետության նախագահը դիվանագետների հետ ամենամյա հանդիպման ժամանակ: Երեւի սա էլ առիթ էր, որ մենք մի անգամ էլ խթանենք հայկական ինտելեկտի հավաքական ներուժը եւ մտածենք այնպիսի ինքնապաշտպանության ու ինքնակազմակերպման ջանքերի մասին, որոնք կհամախմբեին սփյուռքի համայնքները զանազան մարտահրավերների դեմ: Այս աշխատանքն, անշուշտ տարվել է, տարվում է եւ պետք է ուժեղանա, բայց ասվածիս լույսի ներքո մի բան ակնհայտ է: Նախ եւ առաջ կարիք կա ամրապնդելու այն բոլոր աշխատանքի ձեւերը, որոնք վերջին կես դարի ընթացքում ապացուցել են իրենց դրական նշանակությունը: Ավելացնելով զանազան աղբյուրներից հայթայթվող նյութական միջոցները հանուն հայապահպանության, մենք հայկական պետության բոլոր տեսակի պարտավորությունների շարքում պետք է ավելացնենք եւս մեկը: Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության հայեցակարգում ձեւակերպված այն մտքի կողքին, ըստ որի Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչումն ու դատապարտումը Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ապահովման երաշխիքներից մեկն է, պետք է ավելացնել դրույթ, որ Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչումն ու դատապարտումը սփյուռքում հայապահպանության եւ սփյուռքահայ համայնքների անվտանգության ապահովման երաշխիքներից մեկն է: Եվ այս մոտեցումը պետք է հասկանալի եւ հարգելի դարձնել աշխարհում մեր բոլոր բարեկամների համար:

# ՀԲԸՄ-ն՝ սիրիահայերի կողքին

*Մեկ միլիոն դոլար արդեն փոխանցվել է սիրիահայության օժանդակելու հիմնադրամին*

*1-ին էջից*

ՀԲԸՄ-ի կոչին արձագանքողներն ու նախաձեռնությունը ողջունողները շատ են եղել. սիրիահայության կարիքների համար ստեղծված հիմնադրամին արդեն փոխանցվել է 150.000 դոլար: **Յակուբյանը** համոզված է՝ սա միայն սկիզբն է. հետագայում սիրիահայերին օժանդակելու ցանկություն հայտնողների թիվն ու տրամադրվելիք գումարը կբազմապատկվի:

Որպեսզի տրամադրվելիք օժանդակությունը հասնի իր նպատակին, ՀԲԸՄ-ն համագործակցում է Սիրիահայ օգնության համակարգման մարմնի հետ, որը համախմբում է համայնքի բոլոր հայկական կազմակերպություններն ու կապ պաշտպանում ավանդական երեք կուսակցությունների հետ: ՀԲԸՄ-ն Սիրիայում գտնվող իր կենտրոնների միջոցով կազմակերպում է մարդասիրական օգնության աշխատանքներ: Յակուբյանն ընդգծում է, որ 2.500 ընտանիքի արդեն բաժանվել է մարդասիրական օգնություն՝ մեկ ամսվա համար նախատեսված սնունդ, ջուր եւ դեղորայք:

«Գուցե այս մեկ ամսվա ընթացքում Սիրիան հանդարտվի, խաղաղվի, գուցե եւ ճգնաժամն ավելի երկար շարունակվի: Այդ ժամանակ այս մեկ ամսվա կատարածը կհամարվի ոչինչ: Հետեւաբար կոչ ենք անում բոլորին՝ համախմբվել հանուն ընդհանուր գաղափարի», ասաց Յակուբյանը՝ հավելելով, որ ՀԲԸՄ-ի երիտասարդական թեւն էլ անգործ նստած չէ:

Հայ երիտասարդաց ընկերակցության երիտասարդներն ու սկաուտները պատրաստում են ձեթ, շաքար, ձավար, յուղ եւ պահածո պարունակող տուփեր, որոնք սիրիահայերին փոխանցում են վարժարանների ավտոբուսներով:

ՀԲԸՄ-ի նախագահ **Պերճ Սեդրակյանը** եւ սփյուռքի նախարար **Հրանուշ Հակոբյանը** վերջերս քննարկել են Հայաստանում սիրիահայերի հիմնախնդիրները համակարգող հասարակական կազմակերպություն հիմնելու առաջարկությունը: Այն հավանության է արժանացել, եւ Բարեգործականը խոստացել է, որ կնպաստի այդ կազմակերպության գործունեությանը:

«Բարեգործականը չի սահմանափակվի միայն Սիրիայում տեղացի հայերին օժանդակություն ցուցաբերելով, այն կշարունակվի Լիբանանում կամ Հայաստանում ապաստան գտած սիրիահայ ընտանիքներին», շարունակեց Յակուբյանը:

Հայաստան եկած սիրիահայերին օգնելու հարցը նույնպես կազմակերպության օրակարգում է: ՀԲԸՄ-ն ոչ միայն տարածք կտրամադրի Հայաստանում գտնվող սիրիահայերին՝ հավաքներ անցկացնելու, ճանաչողական հանդիպումներ ունենալու եւ իրենց հուզող հարցերը քննարկելու, այլեւ ֆինանսապես կօժանդակեն կարիքավորներին: Ներկա դրությամբ, սփյուռքի նախարարության հետ ցուցակն է մշակվում՝ պարզելու, թե Հայաստան եկած սիրիահայերն ինչ խնդիրներ ունեն: «Բնակարանների վարձավճարների ու ուսման վարձերի խնդիրները կփորձենք մենք լուծել», ասաց Յակուբյանը՝ հավելելով, որ պարբերաբար տեղյակ կպահեն կատարված աշխատանքների եւ նվիրատվությունների վերաբերյալ:

# Վարչապետ Էրդողանը որպես ատելության դրսեւորում դատապարտում է «Մուսուլմանների անմեղությունը» ֆիլմը

*Թվում է, թե Ստամբուլում «Բոլորդ հայ եք, բոլորդ վիժվածք» կարգախոսով պետականորեն կազմակերպված հանրահավաքը մարդասիրություն էր սերմանում*

Մինչ «Մուսուլմանների անմեղությունը» ֆիլմը շարունակում էր հուզումների պատճառ դառնալ իսլամական աշխարհում, ինչպես նաեւ ԱՄՆ-ի, եվրոպական երկրների մահմեդականների շրջանում, Թուրքիայի ինտերնետային համացանցից հանվել է ֆիլմի տեսագրությունը՝ այդպիսով զգալի կանխարգելվել դրա հասանելիությունը: Այդ մասին սեպտեմբերի 26-ին նշել էր «Դունյա բուլթենի» կայքէջը: Ըստ որում՝ դա տեղի է ունեցել տրանսպորտի, ծովագնացության եւ հաղորդակցության նախարարության կարգադրությամբ, որի հիմքում «Մուսուլմանների անմեղությունը» ֆիլմին վարչապետ Էրդողանի հավազդեցությունն է:

Ինչպես սեպտեմբերի 20-ին գրել էր «Հաբերսոլ» կայքէջը, Թուրքիայի վարչապետը, ֆիլմը համարելով սադրանք, ասել է. «Իսլամի գերագույն արժեքների եւ մարգարեի նկատմամբ անարգանքը չի կարելի դիտարկել որպես մտքի եւ դավանանքի ազատություն»: Այնուհետեւ նա «մարդկանց սրբությունների դեմ ոտնձգությունները որակել էր ատելության դրսեւորում, հետեւաբար եւ մարդկության դեմ հանցագործություն, ուստի այս հարցը ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայում բարձրացնելու պատրաստակամություն էր հայտնել»:

«Վաթանի» սեպտեմբերի 23-ի համարի վկայությամբ, «Արդարություն եւ բարգավաճում» կուսակցության հերթական համագումարի պատճառով Էրդողանը Նյու Յորք չմեկնեց: Սակայն նրա կուսակցության հատուկ խումբը աշխատանքներ էր ձեռնարկել, որպեսզի իսլամաֆոբիան, ինչպես նաեւ կրոնների եւ սրբությունների նկատմամբ անարգանքը ընկալվի ատելություն սերմանելու հանցագործություն եւ պատժվի միջազգային համապատասխան կոնվենցիայով:

Միջազգային ի՞նչ արձագանք կգտնի Էրդողանի կառավարության այս նախաձեռնությունը, ցույց կտա ժամանակը: Բայց որ վարչապետ Էրդողանը անձամբ բազմաթիվ ոտնձգություններ է կատարել ալավիների մշակույթին, վերջիններիս աղոթատեղերն անվանել է «անճոռնի», նսեմացրել է զրադաշտությունն ու վիրավորել աթեիստներին, կասկած չի հարուցում: Համենայն դեպս, «Հաբերսոլը» սեպտեմբերի 20-ի համարում արձագանքել է Էրդողանի այլադավաններին ուղղված ոտնձգություններին:

Ինչ վերաբերում է Էրդողանի կառավարությանը, ապա նա էլ փետրվարի 26-ին Ստամբուլի «Թաքսիմ» հրապարակում կազմակերպել էր Խոջալուի այսպես կոչված կոտորածի «ոգեկոչման» հանրահավաք, որի 100 հազար մասնակիցներ «Բոլորդ հայ եք, բոլորդ վիժվածք» մակագրությամբ ցուցապաստառներով Օգյուն Սամասթին փառաբանելուց զատ վերջինի նման սպիտակ բերետ էին կրել, որ հիանան ստոր մարդասպանով:

Ավելին, հայերին հրապարակավ վիժվածք անվանող, հայ սպանելու համար մարդասպանին փառաբանող եւ մարդասպանով հիացող 100-հազարանոց այս ոհմակի առջեւ վրեժխնդրության կոչերով ելույթ էր ունեցել կառավարության ներքին գործերի նախարար Իդրիս Նաիմ Շահինը եւ բացականչել. «Ակն ընդ ական, ատամն ընդ ատաման»:

Եթե հայերին վիժվածք անվանելը, հայի սպանելու համար մարդասպանին փառաբանելն ու մարդասպանով հիանալը կամ ներքին գործերի նախարարի մակարդակով վիժվածք անվանող եւ մարդասպանով հիացող ոհմակին վրեժխնդրության կոչեր անելը ատելություն սերմանելու դրսեւորում չէ, ապա պետք է ազգային արժեք եւ արժանիք համարվի թուրք հրոսակի համար: Այդ դեպքում արդեն այս հրոսակը չպետք է «Մուսուլմանների անմեղությունը» ֆիլմը դիտարկի իբրեւ ատելություն սերմանելու դրսեւորում, ոչ էլ խոսի կրոնական սրբությունների ոտնահարման մասին: Այս սրբությունները մարդկանց համար են, այլ ոչ թե մեկ այլ ժողովրդին պետականորեն կազմակերպված հանրահավաքում վիժվածք անվանող եւ 21-րդ դարում դեռեւս մարդասպանով հիացող ոհմակի համար:

ՀԱԿՈԲ ՉԱՔՐՅԱՆ

# Իրաքի վարչապետը մերժում է Էրդողանին

Շուտով Անկարայում կիրավիրվի վարչապետ Էրդողանի «Արդարություն եւ բարգավաճում» կուսակցության հերթական համագումարը: Ենթադրվում է, որ համագումարին հյուրի կարգավիճակով կմասնակցեն Եգիպտոսի նախագահ Մուրսին, Հյուսիսային Իրաքի «Քրդիստան» շրջանի ղեկավար Բարզանին, ինչպես նաեւ Գերմանիայի նախկին կանցլեր Շրյոդերը:

Ինչպես երեկ տեղեկացրել էր «Դունյա բուլթենի» կայքէջը, համագումարին Թուրքիայի վարչապետը հրավիրել է նաեւ Իրաքի վարչապետ Ալ Մալիքիին: Սակայն Մալիքին կիսապաշտոնական «Ալ Իրաքիա» հեռուստատեսությանը տված հարցազրույցում նշել է, որ ինքը զբաղվածության պատճառով չի կարող արձագանքել հրավերին, ուստի դա մերժում է եւ այդ մասին նամակով իրազեկել է վարչապետ Էրդողանին:

Հ. Չ.

# Իտալական հանդեսը համերաշխվեց «Շառլի էբդոյի» հետ

Իտալական El Jueves («Հինգշաբթի») երգիծական շաբաթահանդեսը երեկ հրապարակել է Մուհամմեդ մարգարեի մի ծաղրանկար: Խմբագրությունը հայտարարել է, որ դա արվում է ի նշան համերաշխության ֆրանսիական «Շառլի էբդո» երգիծաթերթի հետ, որի աշխատակիցները սպառնալիքներ էին ստացել համանման գործողությունների համար:

Իտալական հանդեսի շապիկի վրա ոստիկանությունում հանցագործների ճանաչման արարողակարգն է: Մակագրված է հետեւյալը. «Որեւէ մեկը գիտե՞, թե ինչ տեսք ունի Մուհամմեդը»:

El Jueves-ի խմբագրակազմի անդամ **Խոսե Լուիս Մարտինը** «Ազատություն» ռադիոկայանին տված հարցազրույցում պատասխանելով այն հարցին, թե չի՞ վախենում արդյոք մահմեդականների վրեժից, ասել է, որ «լրագրողներն իրավունք չունեն ինքնագրաքննությամբ զբաղվել սպառնալիքների դեմ հանդիման»:

Մարտինը խոսել է նաեւ վերջին շաբաթներին մահմեդական աշխարհում ցույցերի եւ խժդժությունների պատճառ դարձած «Մուսուլմանների անմեղությունը» ամերիկյան կիսապրոֆեսիոնալ ֆիլմի մասին: Նրա խոսքերով, ֆիլմը կամ ծաղրանկարները «սոսկ պատրվակ են նրանց համար, ովքեր առանց այդ էլ միշտ պատրաստ են դիմել բռնարարքների»: «Խոսքի ազատությունը բարձր է կրոնական մոլեռանդությունից», եզրափակել է լրագրողը:

Անցյալ շաբաթ ֆրանսիական «Շառլի էբդո» երգիծաթերթը շապիկի վրա եւ ներսի էջերում հրապարակել է Մուհամմեդ մարգարեի ծաղրանկարներ, դա բացատրելով կրոնական հանդուրժողականությանը նպաստելու ձգտմամբ: **«Ազգը»** երեկ գրեց եգիպտական «Ալ Վաթան» թերթի մասին, որը ի պատասխան հրապարակել էր հակաարեւմտյան 13 ծաղրանկար:

Պ. Ք.

**«Էկոնոմիկա եւ Իրավունք» ամսագիր**

Ինչպես անթերի վարել հաշվապահությունը եւ խուսափել հաշվապահական, հարկային եւ իրավաբանական սխալներից

▼ Օրենսդրական նորություններ - Պարզաբանումներ - Խորհրդատվություն

▼ «Էկոնոմիկա եւ Իրավունք» - ամսագիր ղեկավարների եւ մասնագետների համար

*Բաժանորդագրվելու համար զանգահարեք 54-24-81, 54-74-81*

WIKILEAKS

# Ասանժը ՄԱԿ-ում քննադատեց Օբամային

**WikiLeaks կայքէջի հիմնադիր Ջուլիան Ասանժը, որը Լոնդոնում ապաստանել է Էկվադորի դեսպանատանը, տեսակապի միջոցով երեկ ելույթ է ունեցել Նյու Յորքում անցկացվող ՄԱԿ-ի Ընդհանուր ժողովի նիստում:**



**Ավստրալացին իր ելույթում քննադատել է ԱՄՆ իշխանություններին եւ անձամբ նախագահ Բարաք Օբամային, որոնք սահմանափակում են տեղեկատվության մատչելիությունը եւ հետապնդում են WikiLeaks-ին: Ասանժը ՄԱԿ-ին հիշեցրել է Իրաքում ծառայած ամերիկացի շարքայինի եւ WikiLeaks-ի ենթադրյալ իրազեկիչ Բրեդլի Մեննինգի պատմությունը: Մեննինգին ձերբակալեցին 2010-ի մայիսին եւ մեղադրեցին հակապետական հանցագործությունների, այդ թվում «թշնամուն օգնելու մեջ»:**

**Ասանժը նշել է, որ WikiLeaks-ի նյութերի (այդ թվում՝ Մեննինգի տրամադրածների) հրապարակումը նպաստեցին «արաբական գարնան» ծագմանը: Նախօրեին ՄԱԿ-ում «արաբական գարնան» մեջ ԱՄՆ-ի դերի մասին խոսել էր Բարաք Օբաման: Ավստրալացին նրա արած հայտարարությունները որակել է «հանդուգն» բառով:**

**«Թունիսի պատմությունը 2010-ին չի սկսվել, իսկ Մուհամմեդ Բուազիզին իրեն հրկիզեց ոչ այն բանի համար, որ Բարաք Օբաման կարողանա վերընտրվել», ասել է Ասանժը: Թունիսում 2010-ի վերջերին հեղափոխություն սկսվեց Բուազիզիի մահից հետո:**

**WikiLeaks-ի հիմնադիրը նաեւ հիշեցրել է, որ ԱՄՆ պետքարտուղար Հիլարի Քլինթոնը Եգիպտոսի հեղափոխությունից առաջ նախագահ Հոսնի Մուբարաքի իշխանությունն անվանել էր «շատ կայուն»:**

**Ասանժը Օբամային եւ ԱՄՆ-ի իշխանություններին կոչ է արել դադարեցնել WikiLeaks-ի եւ Բրեդլի Մեննինգի հետապնդումները: «Ժամանակն է, որ նախագահ Օբաման ճիշտ վարվի եւ միանա ոչ թե խոսքով, այլ գործով աշխարհը փոխակերպող ուժերին», հայտարարել է Ասանժը:**

**Ավստրալացին Էկվադորի իշխանություններին շնորհակալություն է հայտնել իրեն քաղաքական ապաստան տրամադրելու եւ Նյու Յորքի հետ տեսակապը կազմակերպելու համար: Նա Լոնդոնում Էկվադորի դեսպանատանն է հունիսի 19-ից, երբ բրիտանական դատարանը հրաժարվեց փոխել նրան Շվեդիա արտաքսելու վճիռը: Այնտեղ WikiLeaks-ի հիմնադրին ամբաստանում են բռնաբարության մեջ: Ավստրալացին վախենում է, որ Շվեդիայի իշխանություններն իրեն կհանձնեն ԱՄՆ-ին, որտեղ ինքը կարող է մահապատժի դատապարտվել ամերիկյան գաղտնի փաստաթղթերի հրապարակման համար:**

# Վեցամսյա բանտարկություն IRNA գործակալության ղեկավարին



**Իրանում 6 ամսվա բանտարկության է դատապարտվել IRNA պետական լրատվական գործակալության ղեկավար Ալի Աքբար Ջավանֆիքրը: Այդ մասին հաղորդում է Ֆրանսպրեսը, վկայակոչելով IRNA-ին:**

**Ալի Աքբար Ջավանֆիքրին մեղադրել են այնպիսի նյութեր հրապարակելու մեջ, որոնք վիրավորում են իսլամի հոգեւոր արժեքները եւ հանրային բարոյականությունը: Բանտարկյալի դատապաշտպանի խոսքերով, մեղադրանքների պատճառը IRNA-ի թերթում այն հոդվածի հրապարակումն էր, որտեղ քննադատվում են ստիպված հիջաբ կրող մահմեդական կանայք: Բացի դրանից, IRNA-ի ղեկավարը մեղադրվել է, որ 2011-ին անձնական կայքէջում վիրավորական արտահայտություններ էր արել Իրանի գերագույն հոգեւոր առաջնորդ այաթոլլահ Ալի Խամենեիի հասցեին:**

**2012-ի հունվարին Թեհրանի հեղափոխական դատարանը Ալի Աքբար Ջավանֆիքրին դատապարտել էր 1 տարվա բանտարկության, սակայն գանգատարկումից հետո դատավճռի ժամկետը դարձրին 6 ամիս: Դատարանը նաեւ վճռեց 5 տարով արգելել նրա մասնակցությունը քաղաքական կուսակցությունների ու կազմակերպությունների գործունեությանը եւ լրատվամիջոցների աշխատանքին:**

**Ալի Աքբար Ջավանֆիքրը նախագահ Մահմուդ Ահմադինեժադի մամուլի գծով խորհրդականն է: 2010-ի սկզբից նա գլխավորում է IRNA գործակալությունը: Նախագահ Ահմադինեժադի եւ այաթոլլահ Ալի Խամենեիի հակամարտության շրջանակներում 2011-ի մայիսին ձերբակալվեցին Ահմադինեժադի մի շարք զինակիցներ, որոնց մեջ էր նաեւ Ջավանֆիքրը:**

**Այս տարվա մարտին Ալի Խամենեիի կողմնակիցները հաղթեցին Իրանի խորհրդարանական ընտրություններում, թուլացնելով Ահմադինեժադի դիրքերը: 2013-ին երկրում անցկացվելու են նախագահական ընտրություններ, որոնց Ահմադինեժադն այլեւս չի կարողանալու մասնակցել (3-րդն անգամն է): Խամենեին չի բացառում, որ Ահմադինեժադի լիազորությունների ժամկետի ավարտից հետո նախագահի պաշտոնը լուծարվի եւ երկրի ղեկավարին նշանակի խորհրդարանը:**

ՎԱՂԸ

# Հնդկական դասական արվեստը Հայաստանում



Սեպտեմբերի 29-ին, ժամը 19-ին Առնո Բաբաջանյան համերգասրահում կներկայացվի Հնդկաստանի հինավուրց դասական պարերից մեկը՝ բհարատնատյամը: Սա ավանդական պարաձեւ է, հիմքում ընկած է մարդկային հոգու ու բարձրագույն էության միավորման փիլիսոփայությունը: Բհարատնատյամը, որը Հարավային Հնդկաստանի Տամիլ Նադու նահանգի հպարտությունն է, հայտնի է ոչ միայն Հնդկաստանում, այլեւ սիրված է եւ ուսուցանվում է ամբողջ աշխարհում:

Երեւանում հանդիսատեսին բհարատնատյամ պարը կներկայացնի պարուհի Ռեւատի Ռամաչանդրան, երաժշտական նվագակցումը եւս կկատարեն հրավիրված արտիստները:

Համերգի կազմակերպիչներն են Հայաստանում Հնդկաստանի դեսպանությունը, Հնդկաստանի կառավարության արտաքին գործերի նախարարության մշակութային կապերի հնդկական խորհուրդը եւ Հայաստանի մշակույթի նախարարությունը: Նրանց, ում հետաքրքրում է հնդկական դասական արվեստը ու կցանկանային ներկա լինել համերգին, եւ լրագրողները, ովքեր կուզենան լուսաբանել միջոցառումը, հրավերի համար կարող են դիմել Հայաստանում Հնդկաստանի դեսպանատուն:

Ի. Պ.

# Սիդնեյի «Վահրամ Փափազյան» թատերախումբը՝ Նյու Յորքում



Նյու Յորքի Սրբոց Նահատակաց եկեղեցու Գալուստյան սրահում հանդես եկավ Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության Ավստրալիայի Սիդնեյ քաղաքի «Վահրամ Փափազյան» թատերախումբը՝ ներկայացնելով Ն. Ղարիբյանի «Ինքնակոչ երաժիշտը» կատակերգությունը:

- Մեր թատերախումբը հիմնվել եւ գործում է 1997 թվականից: Իր գոյության 15 տարիների ընթացքում ներկայացումներով հանդես է եկել Ավստրալիայի հայաշատ քաղաքներում: Հյուրախաղեր ենք ունեցել Եգիպտոսում, Կանադայում եւ այժմ էլ՝ առաջին անգամ՝ Նյու Յորքում: Խմբի միակ երազանքն է ներկայացում ունենալ Մայր Հայաստանում,- ասաց թատերախմբի հիմնադիր, դրամատուրգ, ռեժիսոր եւ ներկայացման գլխավոր դերակատար **Նուբար Ղարիբյանը**:

«Ինքնակոչ երաժիշտը» ներկայացման դերակատարներն էին Մարգարիտա Բորղըրը, Կատի Աբրահամյանը, Աննա Բիլբուլյանը, Սեպուհ Խաչատրյանը, Մայքլ Աբրահամյանը, Սեդա Բիլբուլյանը, Սոնա Օհաննեսյանը, որոնց խաղը ջերմորեն ընդունվեց ներկաների կողմից:

Թատերախմբին շնորհավորական եւ շնորհակալական խոսք ասաց եկեղեցու հոգեւոր հովիվ Տ. Աբրահամ քահանա Մալխասյանը:

ՌՈԲԵՐՏ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ
Նյու Յորք
*Լուսանկարը հեղինակի*

# Մոսկվայի կառավարության հրատարակչական ծրագրերից

Սեպտեմբերի 27-30-ը Մոսկվայի կառավարության հրատարակչական ծրագիրը հանրությանը կներկայացնի վերջին տարիների տպագիր եւ էլեկտրոնային լավագույն հրատարակությունները, որոնք կազմում են շուրջ 750 անուն տպագիր եւ էլեկտրոնային թողարկումներ: Հատկանշական է, որ Մոսկվայի կառավարության կողմից նվերներ են ստանում նաեւ սահմանափակ տեսողությամբ երեխաները, ինչպես նաեւ Հայաստանի ազգային գրադարանում բացվել է սահմանափակ տեսողությամբ անձանց համար հատուկ ընթերցասրահ: Իսկ այսօր գրադարանին կնվիրաբերվի Մոսկվայից բերված նկարազարդ գրքեր:

Այսօր Հայաստանի ազգային գրադարանում տեղի կունենա «Деньги. Пушкин. Деньги» նկարազարդ ալբոմի շնորհանդեսը:

Ս. Հ.

# «Միջազգային աստղ»՝ «Ոսկե ծիրանին»

Սեպտեմբերի 30-ին Ժնեւի ՄԱԿ-ի եվրոպական կենտրոնական գրասենյակում «Ոսկե ծիրան» միջազգային կինոփառատոնը կարժանանա «Միջազգային աստղ որակի համար» մրցանակի՝ «Ոսկե» անվանակարգում: Հեղինակավոր այս մրցանակը, որ արդեն շնորհվում է 37 տարի աշխարհի բազմաթիվ երկրներում եւ սեկտորներում գործող կազմակերպություններին, սահմանել է «Գործարար նախաձեռնությունների ուղղություններ» կազմակերպությունը՝ հաշվի առնելով Ժնեւում ընդունված Որակի միջազգային կոնվենցիան:

Հ. Հ.

# Արձագանք քաղաքային միջավայրի մի փոփոխությանը

Շառլ Ազնավուրի հրապարակի նստարաններին «նստած» Չարենցի եւ Մհեր Մկրտչյանի արձանների մասին առաջինը Ֆեյսբուքից տեղեկացա: Մեր քաղաքի բազմաթիվ նորամուծություններից այս մեկը շատ տպավորիչ թվաց: «Ինչ հաճելի բան», մտածեցի: Թեեւ սովորություն չունեմ բացօթյա նստարաններին նստելու, բայց մտովի պատկերացրի՝ ինչ հաճելի է, կնստես Չարենցի կողքին եւ ակամա նրա հետ զրույցի կբռնվես: Նույնիսկ նա, ով քիչ բան գիտի բանաստեղծի ու բանաստեղծության մասին (որքան չլինի, բոլորս դպրոցական տարիներին մի բան սովորել ենք կամ գոնե լսել) հնարավոր չէ կողքին չզգա Չարենցի պես բանաստեղծի կամ Մհեր Մկրտչյանի պես արտիստի ներկայությունը, ու այս ներկայությունը չարենցյան շունչ ու մկրտչյանական մթնոլորտ, տրամադրություն կստեղծի, կվերհիշեցնի տողեր, մտքեր, ֆիլմի կադրեր՝ սիրելի ձայներ, հնչյուններ, պատկերներ կբերի ու կկտրի քեզ երեւանյան տտիպ առօրյայից:

«Մոսկվա» կինոթատրոնի, Նկարիչների տան եւ «Երեւան» հյուրանոցի սրճարանի՝ խորհրդային ժամանակներից ժառանգված մտավորական եռանկյունու մթնոլորտը, բուռն երեւակայությունների, խոսքի անհավանական ազատությունների այդ ինտելեկտուալ միջավայրը այնպիսի էներգիա ունի կուտակած, որ այդ տոկոսների հաշվին դեռ շարունակում է պահպանել մագնիսական ձգողականությունը, մտածումի, խոհի ու ապրումի հագեցվածությունը, ու մտավորական այն շունչը հիմա էլ զգացնել տալիս: Թերեւս պատահական չէ, որ առաջին ամենամտերմիկ արձանները Երեւանում այստեղ տեղադրվեցին: Չէ՞ որ Չարենցը ապրել է այս հյուրանոցում, դե Մհեր Մկրտչյանն էլ սրճարանի այցելուներից էր:

Կնստես կողքներին ու զրույցի կբռնվես, ինչքա՜ն բան կա հարցնելու: Կհարցնես ու կսպասես պատասխանի: Լռությունից չես նեղվի, նորից կսպասես ու կշարունակես իր բանաստեղծությամբ հետը խոսել. ժամանակդ կփոխվի, ներսդ կփոխվի: Ու կժպտաս ներքուստ՝ բավարարված քաղաքային միջավայրի այդ փոփոխությամբ:

Լավ գաղափար է, եւ լավ կլինի, եթե ծրագիրը շարունակվի, նոր հետաքրքրական ձեւեր ծնվեն, եւ ինչպես երիտասարդ բարեկամներս են հուշում՝ ինչու միայն հայեր, որքան հարազատներ ունենք օտարների մեջ (անուններ չթվարկենք):

Այսպես քաղաքը կսկսի ձեւավորել միանգամայն տարբեր մշակույթ: Արձանները քաղաքային կյանքի մի մասն են եւ ոչ միայն զուտ որպես արվեստ կամ գեղագիտություն, նրանք բնակավայրին հաղորդում են կենսագրական կարեւոր տարր: Եթե ճարտարապետությունը քաղաքի անմիջական տեսողական նկարագիրն է, ապա արձանները այնտեղ ապրող ժողովրդի մշակութային պատմության կրողներից են. միայն թե՝ վարպետություն, ճաշակ ու զգացողություն է պետք՝ արձանին կենդանի հաղորդակցման «շունչ» փոխանցելու: Այդպիսի շունչ ունեն աշխարհին հիացմունք պատճառող բոլոր մեծ քաղաքները՝ Փարիզը, Վիեննան, Լոնդոնը, Հռոմը, Պետերբուրգը... Արքաներ, զորավարներ, հերոսներ, նկարիչներ, գրողներ, գիտնականներ, յուրաքանչյուրը՝ ժամանակի, պատմության ու մշակույթի մի էջ:

Այսպիսի տաք զգացողություններ, թերեւս, շատերը ունեցան «նստարանային» այս արձանագործության առիթով: Դրանք մերձեցնում են մեզ մեծերի հետ, ստեղծում մտերիմ մթնոլորտ - կնստես այնտեղ, ու խոսքը, հիշողությունը, արվեստը քեզ կկլանի, կհուզի, կհարստացնի:

Ավա՜ղ, սակայն, միշտ չէ այդպես, մանավանդ այսօր, մեր ժամանակներում, կոշտացած մարդկանց շրջապատում. այս ամենը, գուցե ծիծաղելի է, գուցե նայիվ՝ ռոմանտիկայի հոտ է նույնիսկ գալիս: Մեզանում, ցավոք, տգետների այնպիսի կարծր շերտեր են




գոյացել, տհասների բանակ՝ քաղաքային մշակույթին, կիրթ վարվելակերպին բացարձակ անտեղյակ: Ու սրանք հայտնվում են այնտեղ, ուր պետք չէ ոտք դնեն ընդհանրապես, որովհետեւ պղծում են այն, ինչ լավ է, գեղեցիկ է, ազնիվ է, որովհետեւ սրանց գործը ջարդելը, ավերելը, այլանդակելն է: Ընդամենը երկու օր, եւ արձաններից մեկի մասը ջարդվեց, խզբզեցին, գրոտեցին, մրոտեցին:

... Ու կնայի Չարենցը՝ հեգնական, ու նորից կհնչի «Տաղ անձնականը»՝

*«...Շուրջս աշխարհն է աղմկում, մարդկային*
*կյանքն անհավասար -*
*Եվ ո՞վ կասի՝ ինչո՞ւ ես դու, եւ ո՞վ կասի,*
*թե ո՞ւր հասար:*
*Դեմքերը, ա՜խ, բութ են այնպես՝ կարծես շինված*
*են տապարով...»:*

ՄԵԼԱՆՅԱ ԲԱԴԱԼՅԱՆ

**Հ. Գ.**

*Այդուամենայնիվ, լավ տպավորությունները այսպիսի նոտայով ավարտել, պետք չէ: Հետեւենք քաղաքային միջավայրի նոր, հուսանք՝ ճաշակավոր, փոփոխություններին, նոր արձանների, կանաչ տարածքների:*

# «Եվրոպական ժառանգության օրերը» Հայաստանում

Ինչպես ամեն աշուն 50-ից ավելի Եվրոպական երկրներում, այս տարի եւս անցկացվում է «Եվրոպական ժառանգության օրերը»:

Նշենք, որ 2004 թ. սկսած Հայաստանում եւս ամեն տարի անցկացվում են «Եվրոպական ժառանգության օրեր», որի խորագիրն այս տարի «ճանապարհն» է: Սեպտեմբերի 29-30-ին Հայաստանի բոլոր մարզերում մի շարք պատմամշակութային հուշարձաններ, 50-ից ավելի թանգարաններ՝ շուրջ 110 միջոցառումներով կյուրընկալեն հասարակությանը: Ի դեպ այդ օրերին թանգարանների մուտքը կլինի անվճար:

Նշենք, որ Եվրոպական խորհրդի կողմից ծրագիրը պաշտոնապես ընդունվել է 1991 թ., իսկ 1999-ից այն իրականացվում է Եվրոխորհուրդ-Եվրոմիություն համագործակցության նախաձեռնությամբ:

Ս.Հ.

# Նշում ենք անվանի լեզվաբան Արտեմ Սարգսյանի ծննդյան 70-ամյակը

Գիտական հասարակությունը նշում է անվանի լեզվաբան, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Արտեմ Սարգսյանի ծննդյան 70-ամյակը: Ծննդյան առթիվ այսօր Հ. Աճառյանի անվ. լեզվի ինստիտուտում տեղի կունենա գիտական խորհրդի ընդլայնված նիստ՝ նվիրված լեզվաբանին:

Ա. Սարգսյանի աշխատությունները նվիրված են գրաբարի կառուցվածքային նկարագրությանը, արեւելահայերենի եւ արեւմտահայերենի զուգադրական քննությանը, բառագիտությանը, բարբառագիտությանը, լեզվաբանական աշխարհագրության եւ հանրալեզվաբանության հիմնախնդիրներին:

Անվանի լեզվաբանը ՀԽՍՀ պետ. մրցանակի դափնեկիր է, պարգեւատրվել է ՀՀ Մովսես Խորենացու մեդալով, «Հայրենիքին մատուցած ծառայությունների համար» առաջին աստիճանի մեդալով, ինչպես նաեւ ԿԳՆ ոսկե մեդալով:

Ս.Հ.

# Սերգեյ Սմբատյանը ղեկավարեց Չեխիայի ռադիոյի սիմֆոնիկ նվագախումբը

«Դվորժակի Պրահա» հայտնի երաժշտական միջազգային փառատոնի շրջանակներում սեպտեմբերի 18-ին Պրահայի «Ռուդոլֆինում» համերգասրահում առաջին անգամ ելույթ ունեցավ Հայաստանի պետական երիտասարդական նվագախմբի գլխավոր դիրիժոր **Սերգեյ Սմբատյանը**՝ ղեկավարելով Չեխիայի ռադիոյի սիմֆոնիկ նվագախումբը: Համերգի ընթացքում հնչեցին Բեռլիոզի, Չայկովսկու, Ռավելի, Ռեսպիգիի գործերը: Հատկապես մեծ տպավորություն թողեց Չայկովսկու Ջութակի եւ նվագախմբի համար կոնցերտի կատարումը, որին իբրեւ մենակատար մասնակցեց նորվեգուհի երիտասարդ ջութակահարուհի Վայլդ Ֆրանգը, նույնպես իր տաղանդով գերելով հանդիսատեսին: Իսկ Սերգեյն արժանացավ դահլիճի ջերմ ընդունելությանն ու «Բրավո» բացականչություններին:

Համերգից հետո, «ՕՐԵՐ»-ի հետ զրույցում Սերգեյը բարձր գնահատեց չեխական ռադիոյի սիմֆոնիկ նվագախմբի աշխատանքը եւ գոհունակություն հայտնեց Պրահայի հանդիսատեսից:

«Օրեր» ամսագիր
Պրահա

# Սարգիս Հովսեփյանի հրաժեշտի խաղը կկայանա նոյեմբերի 14-ին



ՀՖՖ նախագահ Ռուբեն Հայրապետյանի որոշմամբ նոյեմբերի 14-ին Երեւանում կայանալիք Հայաստան-Լիտվա ազգային հավաքականների ընկերական հանդիպման ժամանակ տեղի կունենա Երեւանի «Փյունիկի» եւ ՀՀ ընտրանու բազմամյա ավագ Սարգիս Հովսեփյանի մեծ ֆուտբոլին հրաժեշտ տալու հանդիսավոր արարողությունը:

Նոյեմբերի 2-ին 40-ամյակը նշող Սարգիս Հովսեփյանը շատերի համար անսպասելի մրցաշրջանի կեսին որոշեց ավարտել ելույթները, թեեւ եթե ոչ ազգային հավաքականում, ապա գոնե «Փյունիկում» դեռեւս կարող էր բարձր մակարդակով հանդես գալ: Սակայն հայկական ֆուտբոլի անվանի վետերանը, որ միայն Հայաստանի առաջնություններում հարազատ «Փյունիկի» կազմում 365 խաղ է անցկացրել, որոշեց լավ մարզավիճակով հեռանալ, որպեսզի ֆուտբոլասերների հիշողություններում մնան նրա տպավորիչ ելույթները:

Սարգիս Հովսեփյանը Հայաստանի ազգային հավաքականի ռեկորդակիրն է անցկացրած խաղերի քանակով (131): Նա հավաքականի կազմում է 1992-ից՝ մեր ընտրանու հիմնադրման առաջին օրից, երբ հոկտեմբերի 14-ին Հայաստանի հավաքականը «Հրազդանում» իր առաջին պաշտոնական խաղն անցկացրեց՝ մրցելով մոլդովացիների հետ: Ինչ խոսք, Հովսեփյանի ցուցանիշն ավելի բարձր կլիներ, եթե Հայաստանի հավաքականը հատկապես 1990-ականներին ավելի շատ հանդիպումներ անցկացներ: Սակայն այն տարիներին մեր նորաստեղծ ֆուտբոլի ֆեդերացիայի ղեկավարության համար շատ դժվար էր մրցակիցներ գտնելն ու ընկերական մրցախաղեր անցկացնելը, ինչը նաեւ ֆինանսական մեծ ծախսեր էր պահանջում:

Համաշխարհային ֆուտբոլում մատների վրա կարելի է հաշվել այն ֆուտբոլիստներին, որոնք 20 տարի շարունակ հանդես են եկել իրենց երկրների ազգային հավաքականներում: Սարգիս Հովսեփյանը մեկ այլ ուշագրավ ռեկորդի հեղինակ է: Նա հավաքականի կազմում անցկացրած առաջին 127 հանդիպումներում երբեք չի փոխարինվել: Միայն այս տարի Ղազախստանի ընտրանու հետ կայացած ընկերական մրցախաղում Հովսեփյանն առաջին անգամ փոխարինվեց, որը միակն էր հավաքականում նրա ֆուտբոլային կարիերայի ընթացքում:

Եվրոպական երկրների ազգային հավաքականների ֆուտբոլիստների ցանկում Սարգիս Հովսեփյանն անցկացրած 131 խաղով ներկայումս 12-րդ տեղում է: Նա առաջ է անցել համաշխարհային ֆուտբոլի այնպիսի «աստղերից», ինչպիսիք են հոլանդացի դարպասապահ Էդվին վան Դեր Սարը (130 խաղ), դանիացի դարպասապահ Պետեր Շմեյխելը (129), պորտուգալացի Լուիշ Ֆիգուն (127), իտալացի Պաոլո Մալդինին (126), մեկ այլ հանրահայտ դարպասապահ, իսպանացի Անդոնի Սուբիսարետան (126), ռումինացի Գեորգի Հաջին (125), գերմանացի Միրոսլավ Կլոզեն (124) եւ ֆրանսիացի Թյերի Անրին (123):

Իսկ ցուցակը գլխավորում է Վիտալի Աստաֆեւը, որը Լատվիայի հավաքականի կազմում 167 խաղ է անցկացրել: 2-րդ տեղում էստոնացի Մարտին Ռեյմն է (157 խաղ): Հաջորդ տեղերում են գերմանացի հանրահայտ ֆուտբոլիստ Լոթար Մաթեուսը (150), էստոնացի Մարկո Կրիստալը (143), շվեդ դարպասապահ Թոմաս Ռավելին (143), ֆրանսիացի Լիլիան Թյուրամը (142), Իսպանիայի հավաքականի դարպասապահ Իկեր Կասիլյասը (140), ֆինն Յարի Լիտմանենը (137), իտալացի Ֆաբիո Կանավարոն (136), ռումինացի Դորինել Մունտյանուն (134) եւ շվեդ Անդերս Սվենսոնը (133):

# Հայաստանի «Այկիդո Այկիկայ» ֆեդերացիան շուտով կանդամակցի մարզաձեւի համաշխարհային կազմակերպությանը

**Հայաստանի «Այկիդո Այկիկայ» ֆեդերացիան շուտով կճանաչվի մարզաձեւի համաշխարհային ֆեդերացիայի կողմից ու կդառնա այդ կազմակերպության լիիրավ անդամը: Այս մասին երեկ «Նոյյան տապան» ակումբում կայացած մամուլի ասուլիսում տեղեկացրեց ֆեդերացիայի նախագահ Արմեն Ավետիսյանը:**

**Նա օրերս է վերադարձել Տոկիոյից, որտեղ մասնակցել է «Այկիդո Այկիկայ» համաշխարհային ֆեդերացիայի 11-րդ նստաշրջանին: Արմեն Ավետիսյանը Տոկիոյում հաջողությամբ է հանձնել քննությունը եւ ստացել է սեւ գոտի 4-րդ դան: Դա միակ խոչընդոտն էր, որի պատճառով Հայաստանի «Այկիդո Այկիկայի» ֆեդերացիան մինչ օրս մարզաձեւի համաշխարհային ֆեդերացիային չէր անդամակցում: Այդ հարցը իր վերջնական լուծումը կստանա հաջորդ տարվա սկզբին Սանկտ Պետերբուրգում կայանալիք համաշխարհային ֆեդերացիայի նստաշրջանում:**

**Տոկիոյում գտնվելու օրերին Արմեն Ավետիսյանը մասնակցել է միջազգային սեմինարի, որի ընթացքում հանդիպել է մարզաձեւի մի խումբ անվանի մասնագետների հետ, փորձի փոխանակում է կատարել: Այստեղ նա ծանոթացել է Ճապոնիայում արդեն 5 տարի մարզչական գործունեություն ծավալած Արթուր Հովհաննիսյանի հետ: Վերջինս գյումրեցի է, տեղափոխվել Ռուսաստան եւ հմտացել այկիդոյում:**

**Ի տարբերություն արեւելյան մյուս մարտարվեստների, այկիդոյից մրցումներ չեն անցկացվում: Այն ավելի շատ առողջ ապրելակերպի մի ձեւ է, որտեղ մարզիկի գլխավոր հակառակորդն իր օրգանիզմի թուլություններն են: Հատուկ վարժությունների համակարգի միջոցով այկիդոյով զբաղվողները կարողանում են համաչափորեն զարգացնել իրենց մարմինը, ճիշտ բաշխել ծանրաբեռնվածություններն օրգանիզմի տարբեր մասերի վրա: Այկիդոյի փիլիսոփայությունը ոչ թե մրցակցին ոչնչացնելն է, ինչպես մյուս մարտարվեստներում է, այլ հակառակորդի միջից ագրեսիան վերացնելն ու նրան հանգստացնելն է: Այս առումով ամբողջ աշխարհում այկիդոյով բավականին լուրջ մարդիկ են զբաղվում, որոնց մեջ մեծ թիվ են կազմում գործարարները:**



**Հայաստանում առայժմ այկիդոյի 3 հայ մարզիչ է աշխատում: Մոտ 200 հոգի պարապում են Երեւանում գտնվող 3 մարզադահլիճներում, շաբաթական 3 անգամ: Պարապմունքներին մասնակցող 6 խմբերում ընդգրկված են 7-57 տարեկան մարդիկ, որոնց թվում են նաեւ աղջիկներն ու կանայք: Ամսական վարձը 10 հազար դրամ է:**

**Հայաստանի «Այկիդո Այկիկայ» ֆեդերացիան իր սուղ ֆինանսական միջոցներով հանդերձ կարողանում է մասնագետներ հրավիրել այլ երկրներից, որոնք Երեւանում դասընթացներ են կազմակերպում մեր մարզիկների համար: Դրանցից մեկն անցկացվել է այս տարվա հունիսին: Այստեղ էլ մեր մարզիկները քննություններ են հանձնում եւ համապատասխան որակավորում ստանում միջազգային ֆեդերացիայի կողմից: Իսկ հուլիսին Երեւանում կազմակերպվել էր այկիդոյի միջազգային փառատոն, որին հրավիրվել էին անվանի վարպետներ Ռուսաստանից, Վրաստանից, Ղազախստանից: Ֆեդերացիան ամեն կերպ ջանում է պայմաններ ստեղծել այկիդոյով զբաղվողների թիվն ավելացնելու համար: Ոչ մեծ քանակը Արմեն Ավետիսյանը բացատրում է նաեւ մարտարվեստի մասին անհրաժեշտ տեղեկատվության պակասով: Այդ ուղղությամբ եւս քայլեր են ձեռնարկվում:**

ՁՅՈՒԴՈ

## Ժաննա Ստանկեւիչն արժանացավ ոսկե մեդալի

**Ուզբեկստանում անցկացված ձյուդոյի աշխարհի գավաթի խաղարկության հերթական փուլում գերազանց հանդես եկավ Հայաստանը ներկայացնող Ժաննա Ստանկեւիչը՝ արժանանալով ոսկե մեդալի:**

**Մինչեւ 57 կգ քաշային կարգում Ստանկեւիչը հաջորդաբար հաղթելով բելառուս Ռեգինա Շատրաուսկայային եւ ղազախ Սեւարա Նիշանբաեւային, մտավ եզրափակիչ: Վճռորոշ գոտեմարտում Ժաննան իպոնի առավելությամբ հաղթեց Կանադայի ներկայացուցիչ Ջուլիանա Միլանկոնին ու գրավեց առաջին տեղը:**

## Խաղաղ տուր

**Շախմատի «Մեծ սաղավարտի» 3-րդ տուրն առայժմ ամենաերկարատեւն էր: Չնայած դրան, բոլոր պարտիաներն էլ ոչ-ոքի ավարտ ունեցան: Լեւոն Արոնյանը սպիտակներով 33-րդ քայլին հաշտություն կնքեց իսպանացի Ֆրանսիսկո Վալյեխոյի հետ: Ֆաբիանո Կարուանային եւ Մագնուս Կառլսենին չհաջողվեց իրացնել առավելությունը համապատասխանաբար Վիշվանաթան Անանդի ու Սերգեյ Կարյակինի հետ պարտիաներում: Մրցակիցները բաժանվեցին մեկական միավոր վաստակած:**

**3 տուրից հետո առաջատարի դիրքը 7 միավորով պահպանեց Ֆաբիանո Կարուանան: Լեւոն Արոնյանը 5 միավորով 2-րդ տեղում է: 4 միավոր է վաստակել Կառլսենը, որին հաջորդում են Անանդը՝ 3 միավոր, Վալյեխոն՝ 2 եւ Կարյակինը՝ 1:**

**Երեկ մրցաշարի մասնակիցները հանգստանում էին, իսկ այսօր Երեւանի ժամանակով ժամը 22-ին նրանք կրկին կնստեն խաղասեղանների շուրջը՝ անցկացնելու 4-րդ տուրի հանդիպումները: Մեծ հետաքրքրությամբ է սպասվում ՖԻԴԵ-ի վարկանիշային աղյուսակի առաջատարներ Մագնուս Կառլսենի եւ Լեւոն Արոնյանի մրցախաղը, որում հայ շախմատիստը խաղալու է սեւերով: Նշենք, որ այսօրվա դրությամբ Կառլսենի վարկանիշը 2839,1 է, Արոնյանինը՝ 2823,2: Կարուանան սպիտակներով կխաղա Վալյեխոյի հետ, իսկ Անանդի մրցակիցը կլինի մրցաշարի հետնապահ Կարյակինը, որը միայն 3-րդ տուրում առաջին միավորը վաստակեց:**

## Եվգենիա Դոլուխանովան 3-րդ մրցանակակիր

**Դնեպրոպետրովսկում անցկացված շախմատի շրջանաձեւ մրցաշարում Հայաստանը ներկայացնող Եվգենիա Դոլուխանովան 9 հնարավորից վաստակած 6 միավարով գրավեց 3-րդ տեղը: Հաղթող ճանաչվեց ուկրաինուհի Օքսանա Գրիցաեւան, որը վաստակեց 7 միավոր: 2-րդ տեղում նրա հայրենակցուհի Օլգա Կալինինան էր, որի հաշվին գրանցվեց 6,5 միավոր:**

**Դոլուխանովան մրցաշարում միայն մեկ պարտություն կրեց՝ 7-րդ տուրում զիջելով Դինա Բելենկայային, ինչն էլ ճակատագրական եղավ նրա համար: Մրցաշարում նա հաղթեց Վիկտորիա Տարասովային, Մոնիկա Ցիգանովային, հաշտություն կնքեց Սվետլանա Պետրենկոյի, Օլգա Կալինինայի, Օքսանա Գրիցաեւայի եւ Մարիցա Ցիրուլնիկի հետ:**

## Մալաֆյանը բացեց գոլերի հաշիվը «Վիկտորիայում»

**Պլզենի «Վիկտորիայում» հանդես եկող Էդգար Մալաֆյանը բացեց գոլերի հաշիվը նոր թիմում: Չեխիայի գավաթի խաղարկության խաղում նա գրավեց «Չոմուտովի» դարպասը եւ նպաստեց իր թիմի հաղթանակին (3-2): Բացի գոլից, Մալաֆյանը նաեւ գոլային փոխանցման հեղինակ դարձավ: Հանդիպումից հետո կայացած մամուլի ասուլիսում թիմի գլխավոր մարզիչ Պավել Վրբան գովեստով է խոսել Մալաֆյանի մասին՝ նշելով, որ նա թիմում լավագույնն էր:**

## Մովսիսյանն ընդդեմ Մարկոսի եւ Օզբիլիսի

**Ֆուտբոլի ՌԴ գավաթի 1/8 եզրափակիչում Հայաստանի հավաքականի ֆուտբոլիստները մրցակիցներ կլինեն: Հոկտեմբերի 30-ին «Կրասնոդարը» մրցելու է «Կուբանի» հետ:**

**«Կուբանը» գավաթի 1/16 եզրափակիչում արտագնա խաղում հաղթել էր «Վոլգային» (1-0): Այդ խաղին Մարկոսը հայտավորված չէր, իսկ Օզբիլիսը բավականին հաջող խաղաց: «Կրասնոդարի» ֆուտբոլիստներն էլ Ձերժինսկում 2-1 հաշվով դժվարին հաղթանակ էին տոնել տեղի «Խիմկիի» նկատմամբ: «Կրասնոդարի» գլխավոր ռմբարկու Յուրա Մովսիսյանին էլ մարզիչները հանգիստ էին տրամադրել, ուստի նա չմասնակցեց հանդիպմանը:**

## Հաջորդ մրցակիցը «Գովերլա Զակարպատիեն» է

**Ֆուտբոլի Ուկրաինայի գավաթի խաղարկության 1/8 եզրափակիչում Դոնեցկի «Շախտյորի» մրցակիցն Ուժգորոդի «Գովերլա Զակարպատիեն» է, որի կազմում հանդես են գալիս Եղիշե Մելիքյանն ու Արթուր Եդիգարյանը:**

**Հենրիխ Մխիթարյանը «Շախտյորի» պաշտոնական կայքին հայտնել է, որ մրցակցին հաղթելն այնքան էլ հեշտ չի լինի, մանավանդ որ խաղը կայանալու է Ուժգորոդում: Չնայած դրան, նա հույս է հայտնել, որ կհաջողվի հաղթահարել նաեւ այդ փուլը, իսկ հետագայում թիմին ավելի լուրջ մրցակիցներ են սպասում:**

ԱԹԵՆՔ

## Նվիրված էր Հայաստանի անկախության 21-րդ տարեդարձին

Աթենքի «Հայաստան» շաբաթաթերթի տեղեկացմամբ Հայաստանի Հանրապետության անկախության հռչակման 21-րդ տարեդարձի օրը Ռենդիի մինի ֆուտբոլի խաղադաշտում ֆուտբոլային հանդիպում է տեղի ունեցել Աթենքի Նեոս Կոսմոսի «Արարատի» եւ Հունաստանի ցամաքային զորքերի «Էվելպիդոն» ռազմական ակադեմիայի հայ կուրսանտների միջեւ:

Խաղից առաջ մասնակիցներին ողջունել է ՀՀ դեսպանության ռազմական կցորդ, գնդապետ Սամվել Ռամազյանը, որից հետո հնչել է Հայաստանի օրհներգը: Համառ պայքարում անցած հանդիպումն ավարտվել է ոչ-ոքի՝ 6-6: «Արարատից» գոլերի հեղինակներ են դարձել Արսեն Ալոյանը, Հակոբ Գլնճյանը, Ռոբերտ Գալստյանը, Ալբերտ Գալստյանն ու Արտյոմ Սիմոնյանը: Հայ կուրսանտներից աչքի են ընկել Արմեն Ղուլյանը, Էդուարդ Սահակյանը, Հովսեփ Դունամալյանը եւ Սուրեն Սահակյանը:

*Էջը պատրաստեց* **ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ**

# Օրվա հեսքերով

Հունգարական Pester Lloyd անկախ օրաթերթը սեպտեմբերի 26-ին հեգնական շեշտով է արձագանքում Հունգարիայի՝ Հայաստանի հետ հարաբերությունները վերահաստատելու «հետաքրքրությանը»: Նրա, որի համաձայն Հայաստանը դիվանագիտական հարաբերությունների միակողմանի կասեցումը միշի դադարեցնի, իսկ Հունգարիան պատրաստ է «առանց նախապայմանների» վերահաստատել հարաբերությունները: Հունգարիայի կառավարության պաշտոնական հայտարարության մեջ ներման հայց չկա, ոչ էլ զոհվածի հարազատներին ուղղված ցավակցություն, գրում է թերթը՝ հիշեցնելով կացնապատմությունը, դրան հաջորդած ցինիկ մեկնաբանությունները՝ գցել մեր ուշադիր ընթերցանության մեջ, բայց շեշտադրումները, երանգը փոխվել են: Բոլոր թերթերի հրապարակումներին, բնականաբար, չենք անդրադառնալու, բայց տեղեկացնենք, թե «Ֆրանկֆուրտեր ալգեմայնե ցայթունգի», «Դի վելթի», «TAZ»-ի հրապարակումներն ավելին էին, քան դեպքերի պրոֆեսիոնալ շարադրանքը:

«Շատ ուշ է»՝ վարչապետ Վիկտոր Օրբանի «Սա մեր հակամարտությունը չէ: Պիտի հեռու մնանք» ձեւակերպմանը հակադարձում է «Բեռներ ցայթունգը» սեպտեմբերի 18-ին՝ նշելով, թե Հունգարիան արդեն Հայաստան-Ադրբեջան հակամարտության մեջ է, եւ երեւում է՝ դեռ չի էլ կարող արագ ազատվել դրանից: Վկայակոչելով Origo.hu լրատվական պորտալից քաղած տեղեկությանը, շվեյցարական թերթն իրազեկում է, թե Օրբանը կառավարող Fidesz կուսակցության նիստի ժամանակ խոստովանել է, թե հաշվարկել էր, որ մարդասպանին հայրենի երկրում ազատ կարձակեն: Հայաստանի կառավարության սաստիկ քննադատությունը, Սփյուռքի հակազդեցությունն ու ԱՄՆ-ը անակնկալի են բերել հունգար դիվանագետներին: Այդ է պատճառը, որ արտգործնախարար Յանոշ Մարտոնին (Janos Martonyi) Եվրոպայում դաշնակիցներ է փնտրում՝ Հայաստանի հետ հարաբերությունները բնականոն դարձնելու համար: Հունգարական ցուցակում առաջինը Շվեյցարիան է: Եվ խոսքը միայն միջնորդության մասին չէ, այլ «որեւէ տեսակի օգնության», ինչպես ձեւակերպել է հունգար արտգործնախարարը MIT լրատվական գործակալության հետ զրույցում: «Բեռներ ցայթունգի» փոխանցմամբ, Կիպրոսում ԵՄ արտգործնախարարների հետ հանդիպմանը հունգար արտգործնախարարը բոլոր գործընկերներին է դիմել նույն խնդրանքով: Բայց Շվեյցարիայի դերն ուրիշ է՝ առանձնահատուկ երկար ավանդույթ ունի ազգերին հաշտեցնելու առումով: Այդտեղից էլ՝ «մեր հույսը շվեյցարացիներն են» հունգարների հաշվարկը: Թերթը հիշեցնում է նաեւ, որ 2009-ից Շվեյցարիան է ղեկավարում Հայաստան-Թուրքիա «դիվանագիտական հարաբերությունները վերահաստատելու» (բառացի թարգմ. Ան.Հ) բանակցությունները: Ինչ վերաբերում է Հունգարիային, Բեռնը ձեռնպահ է մնում, գրում է նույն աղբյուրը՝ ներկայացնելով Վիեննայում Հայաստանի դեսպանության խոսնակ **Աշոտ Ալեքսանյանի** մեկնաբանությունը. «Բանակցություններ պատրաստ չենք: Նախ՝ Բուդապեշտից պարզաբանում եւ ներողություն ենք ակնկալում»: Բեռնում էլ առանձնապես ուրախ չեն, որ Հունգարիան առերեւույթ փորձում է Շվեյցարիային ներքաշել այս պատմության մեջ, եւ մտադիր է, ինչպես «Բեռներ ցայթունգն» է գրում, Ադրբեջանի դեսպանի հետ հանդիպմանն անդրադառնալ Սաֆարովի արտահանձնման, ներում շնորհելու հարցերին: Թերթը գրում է, թե Հունգարիան արտահանձման պատճառով նորից է բորբոքել Հայաստան-Ադրբեջան հակամարտությունը: Ադրբեջանցիները մարդասպանի ազատ արձակումը դիտում են թշնամի Հայաստանի դեմ տարած հաղթանակ, առաջնորդող քաղաքական գործիչները բարձրաձայն պահանջում են հաջորդ քայլը: «Նոր Ադրբեջան» իշխող կուսակցության գլխավոր քարտուղար Ալի Ահմեդովը Սաֆարովի ճակատագիրը համեմատում է Լեռնային Ղարաբաղի հետ: Երկուսն էլ թշնամու զոհեր են: Սաֆարովի ազատմանը Ղարաբաղի ազատագրումը միշի հաջորդի:

Գերմանական TAZ օրաթերթում Բերնհարդ Քլազենը «Ծաղիկներ կացնասպանին» հոդվածում ընթերցողի ուշադրությունն

# Միջազգային մամուլը սղասում է Հայաստանի ազդանշանին

Կովկասը հեռու է, Հայաստանը կարեւոր չէ, հակամարտությունը մեր խնդիրը չէ (Հունգարիայի վարչապետի խոսքերն են-Ան. Հ.), իրավիճակի բացահայտումը, այն, որ Օրբանը վճիռ էր կայացրել ի հեճուկս դիվանագետների զգուշացման... Հունգարիայում եւ Արեւելյան Եվրոպայում տարածվող օրաթերթը հիշեցնելով պատահածը, պաշտոնական նման ձեւակերպումներն անբավարար է համարում:

Մեր ուշադրությունը գրավեց վերոհիշյալ հրապարակմանը հասցեագրված ընթերցողներից մեկի արձագանքը՝ «Իսկ Հունգարիան ներողություն խնդրել գիտի՞»:

Պատմության դասագիրքը երկրների ներողության բազմաթիվ օրինակներ է ամբարում: Գերմանիան, որտեղից հետեւում եմ մամուլի հայելուն, ամենավառ օրինակն է: Ուշադրություն եմ դարձրել՝ վերջերս գերմանացի պաշտոնյաները մեզ մատնացույց են անում Ֆրանսիա-Գերմանիա հարաբերությունները, բայց ես ո՛չ նշվածը, ո՛չ էլ Լեհաստան-Գերմանիա հարաբերությունները նկատի ունեմ: Մեր պատմությանն աղերսվող ամենաաստույգ համեմատությունը Իսրայել-Գերմանիա հարթությունն է: Ներողություն բառը Գերմանիայում առօրյա հաղորդակցության առանցքն է կազմում, եւ դրա մեջ, որքան քաղաքավարության լավ սերտած դասի, նույնքան հավաքական մեղքի, ապաշխարելով ապաշխարման ենթաշերտը կա: Իր երկրում ինչ էլ որ վճռի, Իսրայելից եկող ազդանշանն է որոշիչը: Ուրեմն, տեղին էր «Դի վելթի» մեկնաբանը գրել, երբ Սաֆարովի աղմկահարույց փաստին անդրադառնալով, օրեր առաջ իր համգամանալից շարադրանքը եզրափակել էր այսպես. կարեւորը՝ ինչպես կարձագանքի Հայաստանը: Հենց այդ արձագանքը, Հայաստանից տրվող ազդանշանները կարելի է շոշափել նաեւ միջազգային, մասնավորապես գերմանալեզու մամուլին օր օրի հետեւելով:

Սկզբում միայն լուրն էին ներկայացնում՝ երբեմն ոչ ստույգ շարադրանքով, Եվրոնյուզի՝ «Հիմա էլ հակամարտություն Հունգարիայի հետ» մոտիվներով վերնագրերը հետզհետե վերացան: Հստակ դատապարտման տողեր թեեւ չենք

վական պորտալից քաղած տեղեկությանը, շվեյցարական թերթն իրազեկում է, թե Օրբանը կառավարող Fidesz կուսակցության նիստի ժամանակ խոստովանել է, թե հաշվարկել էր, որ մարդասպանին հայրենի երկրում ազատ կարձակեն: Հայաստանի կառավարության սաստիկ քննադատությունը, Սփյուռքի հակազդեցությունն ու ԱՄՆ-ը անակնկալի են բերել հունգար դիվանագետներին: Այդ է պատճառը, որ արտգործնախարար Յանոշ Մարտոնին (Janos Martonyi) Եվրոպայում դաշնակիցներ է փնտրում՝ Հայաստանի հետ հարաբերությունները բնականոն դարձնելու համար: Հունգարական ցուցակում առաջինը Շվեյցարիան է: Եվ խոսքը միայն միջնորդության մասին չէ, այլ «որեւէ տեսակի օգնության», ինչպես ձեւակերպել է հունգար արտգործնախարարը MIT լրատվական գործակալության հետ զրույցում: «Բեռներ ցայթունգի» փոխանցմամբ, Կիպրոսում ԵՄ արտգործնախարարների հետ հանդիպմանը հունգար արտգործնախարարը բոլոր գործընկերներին է դիմել նույն խնդրանքով: Բայց Շվեյցարիայի դերն ուրիշ է՝ առանձնահատուկ երկար ավանդույթ ունի ազգերին հաշտեցնելու առումով: Այդտեղից էլ՝ «մեր հույսը շվեյցարացիներն են» հունգարների հաշվարկը: Թերթը հիշեցնում է նաեւ, որ 2009-ից Շվեյցարիան է ղեկավարում Հայաստան-Թուրքիա «դիվանագիտական հարաբերությունները վերահաստատելու» (բառացի թարգմ. Ան.Հ) բանակցությունները: Ինչ վերաբերում է Հունգարիային, Բեռնը ձեռնպահ է մնում, գրում է նույն աղբյուրը՝ ներկայացնելով Վիեննայում Հայաստանի դեսպանության խոսնակ **Աշոտ Ալեքսանյանի** մեկնաբանությունը. «Բանակցությունների պատրաստ չենք: Նախ՝ Բուդապեշտից պարզաբանում եւ ներողություն ենք ակնկալում»: Բեռնում էլ առանձնապես ուրախ չեն, որ Հունգարիան առերեւույթ փորձում է Շվեյցարիային ներքաշել այս պատմության մեջ, եւ մտադիր է, ինչպես «Բեռներ ցայթունգն» է գրում, Ադրբեջանի դեսպանի հետ հանդիպմանն անդրադառնալ Սաֆարովի արտահանձնման, ներում շնորհելու հարցերին: Թերթը գրում է, թե Հունգարիան արտա-

է հրավիրում այն փաստին, որ Սաֆարովին դիմավորել են որպես ազգային հերոսի, իսկ ադրբեջանական մամուլը ցնծությամբ է ընդունել նրան ներում շնորհելու որոշումը: Ոգեւորված է նաեւ պաշտոնական Ադրբեջանը: Հոդվածագիրը ներկայացնում է Նովրուզ Մամեդովի մեկնաբանությունը՝ «Սաֆարովը սպան է այն երկրի, որի մի մասը զավթել են, իսկ սպայի գլխավոր պարտականությունն է հայրենիքի պաշտպանությունը: Սաֆարովը դեռ մանկուց դաստիարակված էր տեսնել, թե հայերն ինչպես էին սպանում իր հարազատներին: Հունգարիայում մի հայ ամեն ինչ արեց, որ Սաֆարովին հունից հանի ու աֆեկտի հասցնի: Բանտում էլ Սաֆարովն իրեն օրինակելի է պահել, բազմաթիվ գրքեր է գրել, հունգարերեն սովորել, հունգար գրականություն է ադրբեջաներեն թարգմանել: Նորվեգ ահաբեկիչ Բրեյվիկը 77 հոգու սպանելու համար 21 տարվա ազատազրկման է դատապարտվել: Ասել է թե ամեն սպանվածի համար՝ 3 ամսվա ազատազրկում»:

«Ներում շնորհելն ամոթ է», գրում է TAZ-ի մեկնաբանը՝ մեջբերելով Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի ադրբեջանական ղեկավար Արզու Աբդուլլաեւայի այն խոսքերը, թե «այն Ադրբեջանի դեմ ուղղված շատ նողկալի աշխարհաքաղաքական խաղ է: Ամոթ է, որ մեր կառավարությունն ու զանգվածային լրատվամիջոցները հերոսացնում են մեկին, որ քնած մարդուն է սպանել: Գիտեմ, որ մեր զինվորներից շատերը ուղիներ են փնտրում հայ զինվորների հետ՝ պատերազմի ժամանակ եղած թշնամությունը վերանայելու: Ինձ համար հերոսները նրանք են»: Սաֆարովի արտահանձնումն ու ներումը մի հարվածով Ղարաբաղյան հակամարտությունը կրկին միջազգային օրակարգ բերեց, գրում է TAZ-ը:

Հունգարիան, Ադրբեջանը ճանաչում են Լեռնային Ղարաբաղի անկախությունը: Միջազգային մամուլը ե՞րբ կարձանագրի այս վերնագիրը, դժվար է կռահել, բայց պատմության հաստափոր գրքում կավելանա այս գլուխն այնժամ, երբ Հայաստանից ազդանշանը տեղ հասնի:

**ԱՆԱՀԻՏ ՀՈՎՍԵՓՅԱՆ**
**Գերմանիա**

---

ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆԻՍՏՈՒՄ

## 2013-ի պետական բյուջեի եկամուտները կգերազանցեն 1 տրիլիոն դրամը

**ՀՀ կառավարությունը երեկ հավանություն տվեց ՀՀ 2013-ի պետբյուջեի նախագծին: Նախագծի համաձայն՝ 2013 թ. պետական բյուջեն եկամուտների գծով կկազմի 1 տրլն 32 մլրդ դրամ (առանց միջբյուջետային փոխանցումներից ստացվող մուտքերի), ծախսերի գծով՝ 1 տրլն 152 մլրդ դրամ, դեֆիցիտը (պակասուրդը)՝ 119 մլրդ դրամ: Գնաճի նպատակային միջակայքը կդրվի 4 տոկոս +/- 1,5 տոկոս սահմաններում: Նախագիծը ներկայացնող ֆինանսների նախարար Վաչե Գաբրիելյանն ասաց, որ 2013-ին նախատեսվում է 6 տոկոս տնտեսական աճ, իսկ այս տարի՝ 7 տոկոս: Բյուջեի լրամշակված տարբերակը սահմանված կարգով կներկայացվի ՀՀ Ազգային ժողով:**

## Նվազագույն աշխատավարձը՝ 35 հազար դրամ

**Կառավարությունը երեկ հավանություն տվեց նվազագույն աշխատավարձը բարձրացնելու եւ ներկայիս 32,5 հազար դրամի փոխարեն 2013-ից 35 հազար դրամ սահմանելու մասին օրենսդրական փոփոխությունների նախագծին: Ինչպես նշեց ֆինանսների նախարար Վաչե Գաբրիելյանը, նախագծի մշակման ժամանակ հաշվի են առնվել ՀՀ կառավարության 2012-2017 թթ. ծրագրի դրույթները, որոնց համաձայն նախատեսվում է հինգ տարում առնվազն կրկնապատկել նվազագույն աշխատավարձը եւ ապահովել նվազագույն աշխատավարձ/աղքատության ցուցանիշի առնվազն 140 տոկոս մակարդակ:**

## Կազինոների տեղափոխումը հետաձգվեց 1 տարով

**Հայաստանի վարչապետի մոտ սեպտեմբերի 25-ին խաղային բիզնեսի ներկայացուցիչների հետ կայացած հանդիպման արդյունքում, երեկ կառավարությունը որոշում ընդունեց, ըստ որի Հայաստանում գործող խաղատների Սեւան, Ջերմուկ եւ Ծաղկաձոր տեղափոխելու ժամկետը կհետաձգվի մեկ տարով՝ մինչեւ 2014 թ. հունվարի 1-ը, 2013 թ. հունվարի 1-ի փոխարեն:**

**ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ**

---

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԲԱՑ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

**Բաց ընթացակարգի ծածկագիրը՝ ՀՀ ԿԱ-ՊԵԿ- ԲԸԾՁԲ-12/1**

Պատվիրատուն՝ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեն, որը գտնվում է ք. Երեւան, Մ. Խորենացու 3, 7 հասցեում, հայտարարում է բաց ընթացակարգ:

Բաց ընթացակարգում հաղթող ճանաչված մասնակցին սահմանված կարգով կառաջարկվի կնքել ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կարիքների համար աշխատանքային միջացառումների եւ ներկայացուցչական ծախսերի կատարման ծառայությունների մատուցման պայմանագիր (այսուհետեւ՝ պայմանագիր):

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի համաձայն՝ բաց ընթացակարգի հայտեր կարող են ներկայացնել բոլորը, անկախ նրանց՝ օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Բաց ընթացակարգին մասնակցելու իրավունք չունեն անձինք, որոնք դատական կարգով ճանաչվել են սնանկ, ունեն ժամկետանց պարտքեր Հայաստանի Հանրապետության հարկային եւ պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով, որոնց գործադիր մարմնի ներկայացուցիչը հայտը ներկայացնելու պահին նախորդող երեք տարիների ընթացքում դատապարտված է եղել տնտեսական գործունեության կամ պետական ծառայության դեմ ուղղված հանցագործության համար, բացառությամբ այն դեպքերի, երբ դատվածությունը օրենքով սահմանված կարգով հանված կամ մարված է, որոնք ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող՝ մասնագիտական գործունեության համապատասխանություն՝ պայմանագրով նախատեսված գործունեությանը, մասնագիտական փորձառություն, տեխնիկական միջոցներ, ֆինանսական միջոցներ, աշխատանքային ռեսուրսներ:

Հաղթող մասնակիցը որոշվում է բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով, որի հետ կնքվում է պայմանագիր:

Սույն գնման գործընթացը իրականացվելու է էլեկտրոնային ձեւով՝ **www.armeps.am** էլեկտրոնային կայքի միջոցով:

Ընթացակարգին մասնակցելու համար Մասնակիցը www.armeps.am կայքի միջոցով ներկայացնում է հայտ: Հայտին կցվում են հրավերով նախատեսված համապատասխան փաստաթղթերը (տեղեկությունները)՝ հաստատված էլեկտրոնային ստորագրությամբ կամ բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով:

Հայտերն անհրաժեշտ է ներկայացնել մինչեւ 2012թ. նոյեմբերի 6-ի ժամը 12:00-ն:

Հայտերը բացվում են հայտերի բացման նիստում՝ հայտերի ներկայացման վերջնաժամկետին:

Բաց ընթացակարգի հաղթողը կճանաչվի մասնակիցների բավարար գնահատված հայտերից՝ նվազագույն գնային առաջարկ ներակայացրած մասնակցի հայտը:

Սույն ընթացակարգի վերաբերյալ բողոքները պետք է ներկայացնել Գնումների աջակցման կենտրոն՝ ք. Երեւան, Կոմիտասի 54/բ հասցեով: Բողոքարկումն իրկանացվում է հրավերի 1-ին մասի 14-րդ բաժնով սահմանված կարգով:

Մասնակիցների որակավորման տվյալների՝ սույն ընթացակարգի հրավերով սահմանված պայմաններին համապատասխանությունը գնահատելու համար, մասնակիցները պետք է պատվիրատուին ներկայացնեն սույն ընթացակարգի հրավերով նախատեսված փաստաթղթեր:

***ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե***

---

## ՕՐԱԿԱՐԳ

**2012թ. հոկտեմբերի 3-ին՝ ժամը 14:30-ին, ՀՀ ֆինանսների նախարարությունում (Մելիք-Ադամյան 1) կայանալիք վիճակախաղերի, շահումով խաղերի եւ խաղատների լիցենզավորման հանձնաժողովի նիստի**

▼ «Ինտեր Լոտո» ՍՊԸ (Վխ-019 լիցենզիա) կողմից ներկայացված վիճակախաղերի կազմակերպման եւ անցկացման կանոնակարգերին համաձայնություն տալու հարցերի քննարկում:

▼ «Նիկմիլ 777» ՍՊԸ (Շխ-236 լիցենզիա), «Բոնուս Մոնուս» ՍՊԸ (Շխ-249 լիցենզիա), «Լեոն-Գեյմ» ՍՊԸ (Շխ-230 լիցենզիա), «Լառա եւ Արմինե» ՍՊԸ (Շխ-237 լիցենզիա) եւ «Բիգ-Ռամզես» ՍՊԸ (Շխ-208 լիցենզիա) նկատմամբ պատասխանատվության միջոցներ կիրառելու հարցերի քննարկում:

***ՀՀ ֆինանսների նախարարություն***

---

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60, 060 271112

Լրատվական գործունէութիւն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 02 Ա N 047261, տրված՝ 18.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրուած է տպագրութեան՝ 27.9.2012, գինը՝ 100 դրամ, տպագրում է «Տիգրան Մեծ» հրատարակչութեան տպարանում՝ Արշակունեաց 2: